

Միացեալ Նահանգներու մէջ Ռուսիոյ դեսպան Անատոլի Անտոնով Մոսկուայի մէջ եռամսեայ խորհրդակցութենէ ետք մեկնած է Նիւ Եորք, ուրկէ ալ պիտի մեկնի Ռաշիսկըն: Այս մասին կը գրէ ռուսական «Ռկ» կայքը: Ըստ Մոսկուայի «Շերեմետեօ» օդակայանի տուեալներուն, օդանաւը, որուն մէջ գտնուած է դիւանագետը, թռիչք կատարած է Մոսկուայի Ժամանակացոյցով ժամը 9:18-ին: Դեսպանը հեռանալէ առաջ «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութեան տուած հարցազրոյցին մէջ նշած է, որ ինք յաւատեալեան տրամադրութեամբ կը մեկնի Միացեալ Նահանգներ եւ յոյս կը դնէ ամերիկացի գործընկերներու հետ «կառուցողական աշխատանքի» վրայ՝ «հաւասար, գործնապաշտ յարաբերութիւններ» ստեղծելու նպատակով:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ ԽԻՍՏ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ԵՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԸ ՆԿԱՏԷ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԷՆ ՃԱԿԱՏԱԳՐՈՐՈՇ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԹԱՑԱՆ ԲԱԶՄԱԹԻՒ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ

20 յունիսին Յայաստանի մէջ տեղի ունեցան Ազգային Ժողովի արտահերթ ընտրութիւնները, որոնց իբրեւ արդիւնք պիտի ընտրուի Յայաստանի վերանկայացած հանրապետութեան 9-րդ խորհրդարանը եւ 8-րդ Ազգային ժողովը: Կեդրոնական ընտրական յանձնախումբի տուեալներուն համաձայն, այս ընտրութիւններուն մասնակցելու իրաւունք ունեցող 2 միլիոն 593 հազար 572 ընտրողներէն 20 յունիսին քուտարկութեան մասնակցեցաւ 1 միլիոն 281 հազար 174 քաղաքացի կամ 49,4 տոկոսը: Յանձնախումբին տուեալներով՝ մարդերուն պատկերը հետեւեալն է. Արագածոտն մարզին մէջ քուտարկած է 58.737 քաղաքացի կամ ընտրելու իրաւունք ունեցողներուն 50 առ հարիւրը, Արարատ մարզին մէջ՝ 113.625 կամ 50,87 առ հարիւր, Արմավիրի մարզ՝ 104.880 կամ 44,40 առ հարիւր, Գեղարքունիքի մարզ՝ 86.173 կամ 45,47 առ հարիւր, Լոռիի մարզ՝ 109.141 կամ 46,73 առ հարիւր, Կոտայքի մարզ՝ 121.212 կամ 50,08 առ հարիւր, Շիրակի մարզ՝ 93.551 կամ 41,24 առ հարիւր, Սիւնիքի մարզ՝ 66.252 կամ 60,38 առ հարիւր, Վայոց Ձորի մարզ՝ 26.132 կամ 56,05 առ հարիւր, Տաւուշի մարզ՝ 58.666 կամ 53,48 առ հարիւր: Երեսնի մէջ քուտարկելու իրաւունք ունեցող 859.000 քաղաքացիներէն քուտարկութեան մասնակցած է 442.846 հոգի կամ 51,55 առ հարիւր:

Յայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններուն ելեկտրոնային տարբերակով մասնակցած էր 500 ընտրող քուտարկութեան իրաւունք ունեցող 650 ընտրողներէն: 45 քուտարթիւթիկ անվաւեր նկատուած:

Այսպէս, ամենէն շատ քուէն ստացած է «Քաղաքացիական պայմանագիր»-ը՝ 163, ապա «Յայաստան» դաշինքը՝ 135, երրորդը «Յայ ազգային քոնկրետ» կուսակցութիւնը՝ 43:

«Հանրապետութիւն» կուսակցութիւնը ստացած է 17, «Պատիւ ունեմ» դաշինքը՝ 14, «Լուսաւոր Յայաստան» կուսակցութիւնը՝ 14, Ազատական կուսակցութիւնը՝ 12, «5165 ազգային

պայմանագիր» կուսակցութեան, 18,56 առ հարիւրը՝ «Յայաստան» դաշինքին, 5,3 առ հարիւրը՝ «Պատիւ ունեմ» դաշինքին եւ 4,93 առ հարիւրը՝ Բարգաւաճ Յայաստան կուսակցութեան: Ընտրութիւններուն մասնակցած միւս կուսակցութիւնները եւ դաշինքները իւրաքանչիւրը ստացան նուազ քան 4 տոկոս քուէներ:

Երկէ կէս գիշերէն ետք «Յայաստան» դաշինքը հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ նշեց, որ խորհրդարանական ընտրութիւններու հրապարակուող արդիւնքները խիստ վիճաբարոյց են եւ վստահութիւն չեն ներշնչեր:

«Յայաստան» դաշինքը ընդգծեց. «Դրանք ծայրայեղ հակասութեան մէջ են մտնում հանրային կեանքի տարբեր դրսեւորումների հետ, որոնց ակնաւորեալ ենք եղել անցած 8 ամիսների ընթացքում, հանրային կարծիքի ուսումնասիրութեան բոլոր արդիւնքների հետ՝ այդ թւում՝ միջազգային, վերջապէս՝ պարզ բանականութեան հետ:

Քարոզարշաւի ընթացքում ընդդիմադիր ուժերի խիստ բազմամարդ հաւաքները եւ իշխանութեան ակնյայտ սակաւամարդ միջոցառումները, երկրում առկայ վստահութեան ճգնաժամը մատնացոյց էին անում լրիւ այլ հանրային տրամադրութիւնների առկայութիւնը:

Վստահութեան պակասի լրջագոյն հիմք են հանդիսանում բոլն ընտրութեան օրը տարբեր տեղամասերից եկող հարիւրաւոր ահազանգերը, որոնք վկայում են ընտրութեան արդիւնքների համակարգում եւ նախապէս ծրագրաւորուած կեղծարարութեան մասին: Դաշինքը անշեղծ վերագրեալը՝ «Յայաստան» դաշինքը խնդիր է դնում արձանագրուած եւ ենթադրուող խախտումների խորը եւ փաստարկուած ուսումնասիրութեան, ինչիս ձեռնամուխ ենք լինում անմիջապէս:

Քանի դեռ բոլոր խնդրայարոյց հարցերը չեն ստացել ապառիչ բացատրութիւններ, եւ փարպտուած չեն կասկածները, «Յայաստան» դաշինքը չի ընդունելու ընտրութիւնների արդիւնքները»:

Քաղաքացիներուն կողքին, օրուան ընթացքին ընտրութիւններուն մասնակցեցան նաեւ տարբեր կուսակցութիւններու, դաշինքներու ղեկավարներ եւ անդամներ, որոնք լրագրողներուն հետ ունեցած զրոյցներուն ընդմէջէն արտայայտեցին իրենց տեսակական ու կարծիքը:

«Յայաստան» դաշինքի վարչապետի թեկնածու Ռուպերթ Զոչարեան հաստատեց, որ ինք քուտարկեց յանուն արժանապատիւ խաղաղութեան եւ տնտեսական վերելքի: «Յայաստան» դաշինքին նկատմամբ կատար-



վար ու անվտանգ Յայաստանի: «Այսիկա պետութիւն ունենալու չունենալու ընտրութիւն է», շեշտեց ան:

Իշխան Սաղաթէլեան նշեց, որ 20 յունիսին իրենց կատարած աշխատանքի ամփոփման օրն է, եւ ժողովուրդը յաղթանակ պիտի արձանագրէ՝ պետականութիւն ունենալու եւ պետականութիւնը ժողովուրդին վերադարձնելու իմաստով:

Անոր համաձայն, հանրապետութեան ամբողջ տարածքին կիրարկուող վարչական կարելիութիւնները, ընտրական գրասենեակներու անդամները քաջքշելն ու ոստիկանատուն իրաւիւրը կը վկայէ իշխանութեան ջոհագութեան եւ պարտութեան զգացումի մասին: Ան նաեւ ատեցուց, որ իրենք մինչեւ վերջ տէր պիտի կանգնին իրենց քուէին, պիտի կանխեն սանձարձակութիւնը, իսկ ընտրութիւններէն ետք իւրաքանչիւրը պատասխանատուութեան պիտի ենթարկուի:

«Յայաստան» դաշինքի ներկայացուցիչ, «Վերածնունդ Յայաստան» կուսակցութեան նախագահ Վահէ Յակոբեան քուտարկելէ ետք շեշտեց, որ այս ընտրութիւնները անհրաժեշտ են ապագայ սերունդներուն: Ըստ անոր, իշխանութիւնը հոգեւ վարքի մէջ է, եւ ատով պայմանաւորուած է անոր ոչ օրինական կեցուածքը: Անորադառնալով հակաքարոզչական թռուցիկներուն՝ Յակոբեան նշեց, որ իրենք անուազն իրաւունք ունին մտածելու, որ ատիկա իշխանութեան ձեռքի գործն է՝ ատեցնելով, որ Սիսիանի մէջ շատ յայտնի դատաւորին որոշումով՝ անհիմն խուզարկութիւններ կատարուեցան «Յայաստան» դաշինքի՝ Սիսիանի գրեթէ բոլոր մարմիններուն մէջ եւ գրասենեակներու ղեկավարները իրաւիւրուեցան Երեսան՝ բացատրութիւն տալու:

Վահէ Յակոբեանի համաձայն, «Յայաստան» դաշինքի յաղթանակը պիտի ըլլայ շատ համոզիչ ու տպաւորիչ, ան չբացառեց, որ անել վիճակի մէջ յայտնուած իշխանութիւնը պիտի փորձէ բախումներ ստեղծել, բայց իրենց սաղանքներով պիտի չտարուին, եւ քաղաքացիներուն ալ կոչ ուղղեց՝ չազդուելու սաղանքներէ: Ան յայտնեց, որ Սիւնիքի մէջ զինուորականները կ'ուղղորդեն ընտրելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը՝ շեշտելով, որ բոլոր խախտումները արձանագրուած են, եւ դաշինքի իրաւաբանները արդէն կը զբաղին այդ հարցերով:

Յայաստանի նախկին նախագահ, «Պատիւ ունեմ» դաշինքին մաս կազմող Հանրապետական կուսակցութեան առաջնորդ Սերժ Սարգսեան ըսաւ. «Ես քուտարկեցի յանուն անվտանգ, ինքնիշխան, տնտեսապէս զարգացած Յայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն՝ յանուն հզօր հայկական բանակին, յանուն մեր սահմաններու անձեռնմխելիութեան եւ յանուն մեր հասարակութեան հաշտեցման»:

Ան դիտել տուաւ, որ ամբողջ իրաւապահ համակարգը, յատկապէս քարոզարշաւի վերջին օրերուն, ակնյայտ իրաւանգներով լծուած է դաշինքին դէմ բիրտ ուժ կիրարկելուն՝ անհասկնալի իրաւերներ իրաւապահ մարմիններու բաժիններ, անօրինական խուզարկութիւններ՝ առանց դատարանի որոշման, անօրինական ձերբակալութիւններ: «Մեզի համար ամենէն հիմնականը պառակտուած հասարակութիւնը միաւորելն է», շեշտեց Յայաստանի նախկին նախագահը:

«Պատիւ ունեմ» դաշինքի վարչապետի թեկնածու Արթուր Վանեցեան քուտարկեց յանուն «ապահով Յայաստանի»։ «Քուտարկեցի յանուն արժանապատիւ, յանուն բարեկեցիկ եւ յանուն ապահով Յայաստանի, յանուն մեր մեծ հայրենիքին, յանուն Արցախի եւ Յայաստանի ապագային, որովհետեւ ես ըսած եմ, որ այսօր ուղղակի ընտրութիւններ չեն, այսօր ընտրութիւն է յանուն Յայաստանի գոյութիւն ունենալուն կամ գոյութիւն չունենալուն», շեշտեց Վանեցեան:

«Բարգաւաճ Յայաստան» կուսակցութեան առաջնորդ, վարչապետի թեկնածու Գագիկ Ծառուկեան եւս մասնակցեցաւ քուտարկութեան եւ քուտարկեց անվտանգ հայրենիքի, հզօր, զարգացող, բարգաւաճ Յայաստանի համար:



պահպանողական շարժում» կուսակցութիւնը՝ 12, «Ազգային-ժողովրդավարական բեւեռ» համահայկական կուսակցութիւնը՝ 6, «Բարգաւաճ Յայաստան» կուսակցութիւնը՝ 3, Շիրինեան-Բաբաջանեան ժողովրդավարներու դաշինքը՝ 3, «Ինքնիշխան Յայաստան» կուսակցութիւնը՝ 3, «Ազատութիւն» կուսակցութիւնը՝ 2, «Մեր տունը Յայաստանն է» կուսակցութիւնը՝ 2, «Քաղաքացու որոշում» կուսակցութիւնը՝ 2, «Արդար Յայաստան» կուսակցութիւնը՝ 1, եւ «Միասնական հայրենիք» կուսակցութիւնը՝ 1 քուէ:

Միւս 4 քաղաքական ուժերը քուէներ չեն ստացած:

Լիբանանի Ժամանակացոյցով կէս գիշերէն ետք ժամը 1:10-ի տուեալներով, Կեդրոնական ընտրական յանձնախումբին հրապարակած նախնական արդիւնքներուն հիման վրայ, Յայաստանի Հանրապետութեան միայն 706 տեղամասի արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը. 317.752 քուտարկողներուն 58,38 առ հարիւրը քուտարկած է «Քաղաքացիական

ուղ հակաքարոզչութեան առնչութեամբ ան նկատել տուաւ, որ օրէկի կոպիտ խախտում արձանագրուած է «Քաղաքին մէջ տեղադրուած են հազարաւոր տեսախցիկներ, արդէն համացանցի մէջ քաղտեր կան: Եւ այն փաստը, որ մինչեւ օրս տակաւին չէ յայտնաբերուած, թէ ո՛վ կատարած է խախտումները, ուղղակի մեծ կակակած կը յառաջացնէ, որ ատիկա կատարուած է իշխանութեան կողմէ կամ անոր յանձնարարութեամբ», յայտնեց Զոչարեան: Անորադառնալով Յայաստանի նախկին վարչապետ Կարէն Կարապետեանին վերաբերող հարցումի մը՝ ան յայտնեց. «Ակնյայտ է, թէ Կարէն Կարապետեան մեզի հետ է: Տակաւին չենք խօսած այն մասին, որ հետագային ի՞նչ տեսակի համագործակցութիւն պիտի կատարուի»:

«Յայաստան» դաշինքի ներկայացուցիչ, ՀՀԴ Յայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան Գեղարքունիքի Գեղամաւան գիւղին մէջ քուտարկելէ ետք նշեց, որ քուտարկած է յանուն ուժեղ, կայուն, բարեկեցիկ, ժողովրդա-

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

«ԱՌԱՆՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԼԻԲԱՆԱՆԻՆ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԳՐԵԼ»

ՇԵՇՏԵՑ ԺՈՂԵՑ ՊՈՐԵԼ

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար Ժոզեֆ Դորել շաքաթավերջին պաշտօնական այցելութեամբ մը հասաւ Լիբանան, ուր հանդիպումներ ունեցաւ իշխանութեան պետերուն եւ քաղաքական անձնաւորութիւններու հետ:

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն նախագահական պալատին մէջ ընդունեց Դորելը, որուն հետ ընկերակցեց Լիբանանը յուզող դժուար ու տագնապալի պայմաններն ու երկիրը այդ իրավիճակէն դուրս բերելու համար Եւրոպական Միութեան ունենալիք դերակատարութեան վերաբերող հարցեր:

Հանդիպումին ընթացքին նախագահ Աուն յայտնեց, որ բարեկարգումը այն հիմնական պայքարն է, որ պիտի մղուի նոր կառավարութեան կողմէ, երբ այդ կառավարութեան կազմութիւնը արգելակող ներքին եւ արտաքին խոչընդոտները վերանան:

Նախագահ Աուն շեշտեց, որ Լիբանանի մէջ տիրող իրավիճակը իւրայատուկ է եւ անկիւս իրապաշտ, սահմանադրութեան ու լիբանանեան ուխտին համաձայն մօտեցում կ'ենթադրէ՝ երկրին գործադիր իշխանութիւնը կազմելու առումով:

Նախագահ Աուն շնորհակալութիւն յայտնեց Դորելին՝ Եւրոպական Միութեան կողմէ Լիբանանին մատուցուած օժանդակութիւններուն եւ յատկացումներուն համար, յատկապէս Պեյրութի նաւահանգիստի պայթումէն ետք, սուրիացի տեղահանուածներու թղթածրարին առումով, լիբանանեան տնտեսական տագնապը դիմագրւելու, ինչպէս նաեւ «Քորոնա» համաճարակին դէմ պայքարելու առումով:

Նախագահ Աուն Դորելէն պահանջեց շարունակել Լիբանանին տրամադրուող օժանդակութիւնները՝ ընդգծելով, որ Եւրոպան պէտք է օժանդակէ Լիբանանին, որպէսզի ան կարենայ վերադարձնել պետական գանձարկղէն իւրացուած եւ եւրոպական դրամատուներ փոխանցուած գումարները:

Նախագահ Աուն ընդգծեց նաեւ իրաւական հաշուեցնութեան կարելորութիւնը՝ հակառակ փտածութեան դէմ պայքարի նպատակով տարուող քաղաքական աշխատանքի արգելակումին:

«Իրաւական հաշուեցնութիւնը առաջին քայլն է, որ պէտք է առնուի փրկութեան նախաձեռնութիւններու շրջագիծին մէջ, իսկ այդ ծրագիրէն բացի կարելի չէ բարեկարգումներ գործադրել եւ Լիբանանի նկատմամբ արտաքին աշխարհին վստահութիւն վերահաստատել», ըսաւ նախագահ Աուն:

Հանրապետութեան նախագահը ընդգծեց, որ Լիբանան կ'ողջունէ Եւրոպական Միութեան կողմէ տրամադրուող որեւէ

օժանդակութիւն, որ կը միտի արագացնել երկրին նոր կառավարութեան կազմութեան հոլովոյթը:

Նախագահ Աուն շեշտեց, որ Լիբանանի կողմէ միջազգային ընտանիքէն ակնկալուած օժանդակութիւնը միայն մարդասիրական ուղրտին չի վերաբերիր, այլ՝ բարգաւաճման: Ան աւելցուց նաեւ, որ Լիբանան ի վիճակի չէ սուրիացի տեղահանուածներուն իրավիճակը հանդուրժելու:

Իր կարգին, Դորել ընդգծեց Լիբանանի նոր կառավարութեան կազմութեան կարելորութիւնը:

Ան շեշտեց, որ Լիբանանի դիմագրւած տագնապը տեղական է ու ներքին՝ աւելցնելով, որ լիբանանցիներուն վրայ այդ տագնապին ունեցած հետեւանքները հսկայ են:

«Լիբանանցի պատասխանատուները պէտք է պատասխանատուութիւն ստանձնեն եւ կառավարութիւն կազմեն, ինչպէս նաեւ անմիջապէս անցնին հիմնական բարեկարգումներու գործադրութեան: Առանց բարեկարգումի գործադրութեան կարելի չէ Լիբանանին օժանդակութիւններ տրամադրել, իսկ մենք օժանդակութեան յատուկ աղբիւրներ ունինք», հաստատեց Դորել:

Ան կարելո՞ր նկատեց, որ երեսփոխանական ընտրութիւնները կայանան սահմանադրութեամբ ճշդուած թուականին՝ աւելցնելով, որ Եւրոպական Միութիւնը Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն հսկող միջազգային դէտեր պիտի ուղարկէ: «Մեզի համար կարեւոր է, որ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւնները կատարուին յարգելով Ժողովրդավարական սկզբունքները», ըսաւ ան:

Դորել այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նէպիի Պըրրիի, որուն հետ ընկերակցեց լիբանանեան իրադարձութիւնները եւ կառավարութեան կազմութեան դիմագրւած տագնապին բոլոր մանրամասնութիւնները:

Պըրրի Դորելին ներկայացուց կառավարութեան կազմութեան իմաստով իր առաջադրած նախաձեռնութիւնը եւ ներկայիս անոր կազմութեան դիմագրւած արգելափակումը:

Հանդիպումին ընթացքին ընկերակցեց նաեւ խորհրդարանին կողմէ վաւերացուած բարեկարգումի յատուկ օրէնքները: Հանդիպումը եղաւ առիթ մը, որուն ընթացքին Պըրրի շնորհակալութիւն յայտնեց Եւրոպական Միութեան դերակատարութեան եւ անդրադարձաւ ֆրանսական նախաձեռնութեան կարելորութեան՝ Լիբանանը իր դիմագրւած տագնապէն դուրս բերելու իմաստով:

Վարչապետարանին մէջ Դորել ընդունուեցաւ վարչապետի պաշտօնակատար Հասսան Տիապի կողմէ:

Հանդիպումին ընթացքին Լիբանանի դիմագրւած ընկերային-տնտեսական եւ ելեմտական տագնապը արծարծելու լոյսին տակ՝ Տիապ յայտնեց, որ այդ տագնապին լուծման բանալին կարելի է ապահովել նոր կառավարութեան կազմութեամբ մէջ միջազգային դրամական ֆոնտին հետ բանակցութիւններուն վերսկզբումով:

Տիապ դրուատեց Լիբանանի եւ Եւրոպական Միութեան միջեւ փոխադարձ գործակցութիւնն ու երկկողմանի յարաբերութիւնները:

Դորել հաստատեց Եւրոպական Միութեան պատրաստակամութիւնը՝ օժանդակելու Լիբանանին եւ լիբանանցիներուն, որպէսզի անոնք դիմագրաւեն երկիրը յուզող դժուար պայմանները:

Դորել, ընկերակցութեամբ Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան դեսպան Ռալֆ Թրաֆի, այցելեց Նշանակեալ վարչապետ Սաատ Հաւրիի:

Հանդիպումին ընթացքին ընկերակցեցան երկրին քաղաքական իրադարձութիւններն ու Լիբանանի եւ Եւրոպական Միութեան միջեւ յարաբերութիւնները:

Դորել այցելեց նաեւ փոխվարչապետ եւ պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար, ինչպէս նաեւ արտաքին գործոց եւ ար-



տերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի գործակատար Զէյնա Աքըրի, որուն հետ ընկերակցեց լիբանանեան իրադարձութիւնները, Լիբանանի մէջ սուրիացի տեղահանուածներուն ստեղծած տագնապն ու լիբանանեան բանակի օժանդակութեան համար Ֆրանսայի իրաւիրած առցանց խորհրդածրուիին արդիւնքները:

Աքըր Դորելին ներկայացուց Լիբանանի դիմագրւած տնտեսական, ընկերային եւ ապրուստի ահաւոր իրավիճակը, եւ դրուատեց Եւրոպական Միութեան դերակատարութիւնը եւ անոր տրամադրած օժանդակութիւնները, յատկապէս անոնք, որոնք Լիբանան հասած էին՝ Պեյրութի նաւահանգիստի պայթումէն ետք:

Աքըր ընդգծեց, որ ամէն իմաստով մէջ շոյնքներով պէտք է օժանդակել Լիբանանին, որպէսզի ան դուրս գայ իր դիմագրւած տագնապէն:

Եարգելի մէջ լիբանանեան բանակի իրամասնատար զօր. Ժոզեֆ Աուն ընդունեց Դորելը, որուն հետ ընկերակցեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները:

Պեյրութէն մեկնումի պահուն Դորել լրագրողներուն հետ ունեցած իր զրոյցին ընթացքին շեշտեց, որ Լիբանանի դիմագրւած տագնապին պատճառը լիբանանցի պատասխանատուներուն միջեւ իշխանութեան բաժնեկցութեան պայքարն է՝ հաստատելով, որ առանց նոր կառավարութեան կազմութեան եւրոպական Միութիւնը Լիբանանին օժանդակութիւններ պիտի չտրամադրէ:

Դորել ընդգծեց, որ կարգ մը լիբանանցի պատասխանատուներ կրնան պատժամիջոցներու ենթարկուիլ, եթէ շարունակեն նոր կառավարութեան կազմութեան ճիգերը եւ անոր գործադրելիք հաւանական բարեկարգումները արգելափակել:

«Երկիրը կը դիմագրաւէ տնտեսական ու ելեմտական լուրջ հարցեր եւ այդ պատճառով ալ լիբանանցիները կարիքը ունին նոր կառավարութեան, որպէսզի լուծէ տնտեսական այդ տագնապը եւ ընկղմել փրկէ լիբանանցիները փոխադրող լաստը», ըսաւ ան:

Դորել շեշտեց, որ Լիբանանի մէջ կայ անվստահութիւն՝ աւելցնելով, որ Լիբանան կարիքը ունի կառավարութեան մը, որ թեւեւ կարողութիւններ ունի, ինչպէս նաեւ իսկական իշխանութիւն՝ Հասսան Տիապի կառավարութեան ձախողութիւնները վերացնելու եւ ելեմտական համակարգի առողջ բարեկարգում իրականացնելու համար:

«Արտաքին օժանդակութիւնները Լիբանան պիտի չհասնին, եթէ ըլլայ կառավարութիւն մը, որ կը բանակցի Միջազգային դրամական ֆոնտին հետ եւ կը պայքարի փտածութեան դէմ՝ գործադրելով բարեկարգումներ», ըսաւ ան:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

- Ովսանա Տեմիրճեան-Պոյաճեանի մահուան առիթով փոխան ծաղկեպսակի՝ - Անի Սարգիսեան եւ զաւակունք 50.000 լ. ո.

Առցանց Լսարան



Երկուշաբթի , 28 Յունիս 2021-ին, Պեյրութի ժամանակացոյցով ժամը 19:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակին կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)

ՀԱՄԱՎՈՐԱԿԱ ՈՒ ԱՊՈՎԱԿՅԻ ՄԵՐ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Զեկուցող՝ Դոկտ. Յարութիւն Արմէնեան
Համաճարակաբան

ՊԱՍԻԼ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԱՒԵԼԻ ՎՏԱՆԳԱՌՈՐ ՏԱԳՆԱՊՆԵՐ ԲԱՅԱՅԱՅՏԵՑ»

Կառավարութեան կազմութեան հոլովոյթը վերաշխուժացնելու ջանքերուն առիթով, Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլ երէկ կէսօրին մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ կառավարութեան կազմութեան տագնապը աւելի վտանգաւոր տագնապներ բացայայտած է՝ աւելցնելով, որ քրիստոնեայ համայնքին իրաւունքները պաշտպանելու առումով իրենց մղած պայքարին նպատակը կառավարութեան կազմութեան արգելափակումը չէ, այլ՝ իրենց ազատ գոյութեան պաշտպանութիւնը:

«Մեր ներկայութիւնը ուղղակիօրէն կապուած է մեր դերակատարութեան, որ պէտք է ամբողջական ըլլայ ազգային իմաստով եւ ոչ թէ համայնքային: Այսպիսով է միայն, որ Լիբանան ինքնուրոյն պատգամի մը տէրը կը մնայ», ըսաւ ան:

Պասիլ հաստատեց, որ այնքան ատեն որ իր հետեւորդները կը տոկան, ապա ինք եւս պիտի տոկայ՝ աւելցնելով, որ այսօրուան իրենց կորսնցուցածը անկարելի է ապագային վերագտնել:

Անդրադառնալով Լիբանանեան ուժեր կուսակցութեան՝ Պասիլ յայտնեց, որ անոնք 1990-ին եւ 2005-ին իրենց դերակատարութիւնը արդար կերպով չեն կատարած քրիստոնեայ համայնքին իրաւունքը պաշտպանելու իմաստով եւ լուռ մնացած են, ու ցարկ 1990-էն ուսանելի ոչ մէկ դաս քաղած:

«Մենք կը մերժենք 24 նախարարէ բաղկացած կառավարութեան մէջ «երրորդութեան» տարազը, այսինքն՝ 8-8-8 դրութիւնը՝ հաստատելով, որ հաւասարութիւնը կը պահանջէ, որ անկիւս ըլլայ 12-12», ըսաւ Պասիլ՝ խստիւ դատապարտելով այն յայտարարութիւնները, թէ հանրապետութեան նախագահը չի կրնար նախարար նշանակել:

Պասիլ Հրճպալլայի ընդհանուր քարտուղար սեյիտ Հասան Նասրալլան կոչեց բարեկամ ու աւելին՝ իրաւարար, եւ անոր ուղղեց իր հետեւեալ խօսքը. «Այսօր քեզի կը վստահիմ իմ եւ իմ ներկայացուցած Ժողովուրդիս իրաւունքները: Դուն գիտես, որ մենք թիրախ ենք, ինչպէս նաեւ գիտես, որ կառավարութեան կազմութեան առումով շատ բաներէ զիջած ենք: Սեյիտ Հասան, ես գիտեմ, որ իրաւունքի շատագուց ես, եւ իբրեւ այդպիսին կ'ընդունիմ ամէն ինչ, որ դուն քեզի համար կ'ընդունիս: Կառավարութեան կազմութեան իմաստով այս է իմ ըսելիք վերջին խօսքը»:

Երեսփոխանական ընտրութիւններուն մասին Պասիլ յայտնեց, որ իրենք կը փափաքին, որ ընտրութիւնները կատարուին սահմանադրութեամբ ճշդուած թուականին, «սակայն կառավարութեան կազմութեան հոլովոյթի ուշանալուն պարագային, կը գորակցինք պէտք եղած քայլերուն դիմելու, որպէսզի կայանան կանխապէս երեսփոխանական ընտրութիւններ», ըսաւ ան:

Նշենք, որ կառավարութեան կազմութեան հոլովոյթով զբաղող քաղաքական ոչ մէկ ուժ անորադարձաւ Պասիլի կատարած յայտարարութիւններուն, իսկ նշանակեալ վարչապետ Սաատ Հարիրի մեկնեցաւ Ապու Տապի:

ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐ-ԿՈՉՆԱԳԻՐ

Մեծայայրճ պրն. Վարդան Փանոս,

Յարգելի՛ պարոն, Լիբանանի հայոց թեմի Դատաստանական խորհուրդ, 11 յունիս 2021 թուականին կայացուցած իր նիստին, զբաղեցաւ ձեր ընտանեկան հարցով:

Սոյն ազդարարագիրով ձեզ կը հրաւիրենք Դատաստանական խորհուրդի նիստին, որ տեղի պիտի ունենայ ուրբաթ, 2 յուլիս 2021-ի կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Պուրճ Համուտի Ազգային առաջնորդարանին մէջ, պաշտպանելու համար ձեր դատը անձամբ կամ փոխարինող անձի միջոցով:

Չներկայանալու պարագային, ձեր բացակայութիւնը ներկայութեան համագոր պիտի նկատուի եւ արձակուի համապատասխան վճիռ:

ԴԱՏԱՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ ՍՊԱՍՈՒՎԾ ՅԱԳԹԱՆԱԿԸ

Երբ կը գրեմ այս յօդուածը, Հայաստանի Ազգային ժողովի արտակարգ ընտրութեան քուէարկութիւնը չէ կատարուած: Ընտրական քարոզչութեան վերջին օրն է: Վաղը լռութեան, այսինքն լուռ խորհրդածութեան օր է, վերջնական որոշում կայացնելու օր է, կիրակի օրուան քուէարկութեան նախապատրաստուելու համար:

Ընտրութեան մասնակցող խայտաբղետ ցուցակներու կատարուած քարոզարշաւը կողմնորոշուելու դժուարութիւն յառաջացուց: Ըսելիք ունենալու, բայց մանաւաղ ժողովրդականութիւն ունենալու յաւակնութիւն ունեցող բազմաթիւ քաղաքացիներ ընտրութեան մասնակցելու համար, համամասնական ընտրութեան պատճառով, կուսակցութիւններ հիմնեցին, հապճեպ ցուցակներ կազմեցին եւ իրենց թեկնածութիւնը առաջադրեցին: Նմանները ո՛չ կառավարման ծրագիր, ո՛չ ալ ղեկավարման ատակ մարդկային բաւարար ներուժ ունին: Բարեբախտաբար չունին նաեւ անցողիկ շեմը յաղթահարելու կարելիութիւն:

Ժողովուրդի որոշ հատուածին մօտ արմատաւորուած «հիններու» դէմ դիրքորոշումը մաշումի ենթարկուեցաւ «նորերու» նկատմամբ աճող դժգոհութեան հետեւանքով: Մնացին անոնք միայն, որոնք կը մերժեն թէ՛ հիները եւ թէ՛ նորերը: Ասոնք մէջ ոմանք կ'առաջարկեն Հայաստանի ազգային անվտանգութեան (ապահովութեան), քաղաքական դիրքորոշումի արմատական փոփոխութիւն: Արեւմտեան կողմնորոշման յարելով, ասոնք կը ծրագրեն դուրս գալ ռուսական «տիրապետութենէն» եւ սրբազրել ռուս-թրքական կարծեցեալ հակահայ դաշնակցութեան հետեւանքները: Այնպիսի համոզումներ յայտնուեցան, որ լսողը կը կարծէ, որ շրջանի քաղաքական ու ռազմավարական ընտրանքներուն մէջ Հայաստանը կրնայ որոշիչ դերակատարութիւն ունենալ: Նման գաղափարներ անշուշտ գեղեցիկ երազանքներ կը խոստանան, սակայն դժբախտաբար շատ հեռու են իրականութեան հետ աղերս ունենալէ եւ քաղաքական ռազմավարութեան առումով մանկամտութեան հասնող գիտակցութեան պակաս կը մատենէ:


Որո՞նք են անցողիկ շեմը յաղթահարելու ունակ ուժերը: Զբացառելով անակնկալ յաջողութիւնները կը թուի, թէ չորս ուժեր պիտի կարենան յաղթահարել շեմը: Անոնցմէ գլխաւորները երկուքն են. Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Ապագայ կայ» ցուցակը եւ Ռոպերթ Զոհրաբեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը: Առաջինը շարունակեց, մինչեւ վերջ, նախկինները դատապարտող եւ ամէն ծախսով անոնց վերագրող բուռն յարձակողական ոճով ինքնարդարացման խօսելածները: Ափսո՛ւ. ո՛չ լուրջ քննարկում, ո՛չ ալ սխալներու սրբագրման, թերութիւններու վերանայման յանձնառութիւն: Ամէն բան լաւ էր, ճիշդ էր, սխալ չկար, թերութիւն չկար ու կրնանք շարունակել հիմա, աւելի արմատական ու խիստ եղանակով, «թափշը» փոխարինելով «պողպատով»: Նոր բաժանումներու խոստումով:

«Հայաստան» դաշինքի խօսելածները ուրիշ է: Անմիջական ապագային միտուած յստակ ծրագիր, համախմբման ու աշխատանքի կոչ, ազգային միութիւնը վերականգնելու, իշխանութեան քանդուած կառոյցները վերաշխուժացնելու, տնտեսութիւնը խթանելու նախաձեռնութիւն: Ու այս դժուար գործերը իրականացնելու ատակ փորձառու ու արհեստավարժ անձնակազմ:

Մեզի կը մնայ սպասել քուէարկութեան սքընտուկներէն դուրս գալիք վճիռին: Հայաստանի ապագան այդ վճիռէն կախում ունի: Ժողովուրդը, որուն անունը շարունակ չարաշահուեցաւ, տեղ է հաւաքական իմաստութեան: Ինչպէս կ'ըսէ «Ազգային սահմանադրութիւնը», օրինականութիւնը ծայներու բազմութեան մէջ է: Թող ծայներու բազմութիւնը բերէ արդարութիւն, խաղաղութիւն, համերաշխ ու արարող հանրութիւն եւ հայրենասնուէր, պարտաճանաչ ու կարողականութեամբ օժտուած իշխանութիւն:

ՏԻԳՐԱՆ ԾԻՆՊԱՇԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ



«ԻՍԼԱՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՅՈՒՄԻ ՄԵՋ. ԲՆԱԳԻՐՆԵՐ, ՀԻՄՆԱԿԱՅԻՐԵՐ, ՈՒՇԸՆԹԱՑՔ»
(Անգլերէն)

Հեղինակ՝
Դոկտ. ՍԵՏԵԱ ԴԱԴՈՅԱՆՍԵՆ-ՏԱՏՈՅԵԱՆ
Լուվեն, 2021

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ ԽԻՍՏ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցեցաւ եւ իր քաղաքացիի լուծ տուաւ նաեւ Ամենայն հայոց Գարեգին Բ. Կ ա թ ո ղ ի կ ո ս ը , որ քուէարկութենէն ետք մաղթեց, որ Աստուած բարի օրերը առատացնէ մեր ժողովուրդի կեանքին մէջ, եւ բոլորս սիրով ու միաբանութեամբ լծուինք մեր երազներու հօգի հայրենիքի կերտման նուիրական գործին:

Մինչ այդ վեհափառ հայրապետը հրապարակած էր յայտարարութիւն մը, որուն մէջ դիտել տուաւ, որ 20 յունիսը Հայաստանի համար վճռական օր է, եւ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցութեամբ քաղաքացիները պիտի որոշեն մեր երկրի յառաջիկայ կերտման ուղին: «Մենք բոլորս կ'ուզենք ապրիլ խաղաղ ու անվտանգ, կայուն, զարգացող երկրի մէջ, հեռու ցնցումներէ ու պառակտումներէ, եւ կ'առաջնորդենք մեր արժանապատիւ ու բարօր կեանքը՝ ազգաշահի ու հայրենաշէն ձեռքբերումներու վրայ:

«Այսօր» մեզ պատուհասած ծանր կորուստներու պայմաններուն մէջ, առաւել քան երբեք, մենք պարտք ու պատասխանատուութիւն ունինք մեր անկախ պետականութեան պահպանման ու ամրապնդման, մեր հայրենիքի զօրացման համար: Պատասխանատուութիւն ունինք մեր զոհուած նահատակներու լուսավառ յիշատակին, մեր ներկայի ու գալիքի, մեր սերունդներուն առջեւ: Ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս, մեր ժողովուրդին առջեւ յառնած է հրամայականը՝ թօթափելու յետպատերազմեան եւ նախընտրական օրերուն ստեղծուած լարուածութիւնը, վերահաստատելու համերաշխութիւնը: Նաեւ կենսական անհրաժեշտութիւն է, որ յետընտրական շրջանին մեր երկրի ներքին կեանքը ընթանայ հանդարտութեան եւ ողջախիտութեան մթնոլորտի մէջ: Երբեք եւ ոչ մէկ ձեռով արդարանալի են ազգը պառակտող գործողութիւնները եւ հասարակութեան մէջ թշնամանքի սերմանումը, բռնութեան ու հաշտեցարարի կոչերը, բախումներ հրահրելը: Հայրապետական մեր յորդորն է, սիրելի՛ ժողովուրդ, գերծ մնալ առեւտրական խօսքէն, անհանդուրժողականութենէն, դըրսեւորել զգոնութիւն, օրինայարգութիւն եւ նոր փորձութիւններով չվտանգել հայրենական մեր կեանքը: Մեր պատմութեան նոր էջը կերտենք հաւատքով ու լաւատեսութեամբ, սիրով ու միասնականութեամբ: Միշտ յիշենք, որ Հայաստանի մէջ կայուն իրավիճակով, մեր ամուր պետականութեամբ է նաեւ պայմանաւորուած Արցախի ապագան, արցախաբնակ մեր քոյրերու ու եղբայրներու հիմնախնդիրներուն յաղթահարումը: Այս գիտակցութեամբ, այս ոգիով ու յանձնառութեամբ մասնակցութիւն բերենք ընտրութիւններուն, անտարբեր չմնանք մեր երկրի վաղուան օրուան հանդէպ, որպէսզի մեր ազգային ու հայրենական անդատանին մէջ տեղ չգտնեն նեղութիւններն ու տառապանքները, նոր արհաւիրքները, որպէսզի միասիրտ ու միախորհուրդ յաղթահարենք ներքին ու արտաքին մարտահրաւերները, կառուցենք հօգի ու պայծառ հայրենիք՝ խարսխուած մեր ինքնութիւնը պայմանաւորող ազգային ու հոգեւոր մեր արժեքներուն վրայ: Այս ընթացքով ի գօրու կ'ըլլանք առատացնել տերունական օրհնութիւնը մեր կեանքին մէջ եւ Հայաստանի ու Արցախի մէջ մարմնաւորել մեր ժողովուրդի բարօրութեան ու յառաջընթացի լուսաւոր տեսիլքները», յայտնեց վեհափառ հայրապետը:

ԸՆՏՐԱԿԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ

Արտահերթ ընտրութիւններուն նախորդող օրն ու քուէարկութեան օրը յատկանշուեցան ընտրական տարբեր խախտումներով, որոնք արձագանգեցին կուսակցութիւններուն եւ դաշինքներուն կազմակերպական մարմինները, անոնք ղեկավարները եւ անհատները:

Հայաստանի քննչական կոմիտէի տարածքային ստորաբաժանումներուն եւ կեդրոնական մարմինին կողմէ 20 յունիսին տեղի ունեցած Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններու քուէարկութեան օրը՝ ժամը 21:00-ի դրութեամբ, ընտրական իրաւունքի իրականացման խոչընդոտելու առերեւոյթ յանցագործութեան դէպքերու վերաբերեալ ստացուած եւ նախապատրաստուած է 66 նիւթ, ինչպէս նաեւ ստացուած է 2 քրեական գործ: Այս



մասին յայտնեցին Հայաստանի քննչական կոմիտէն: Նշուած դէպքերը կը վերաբերին մէկէ աւելի անգամ կամ այլ անձի փոխարէն քուէարկելուն, քուէարկութեան գաղտնիութիւնը խախտելուն, գէնքով տեղամասային կեդրոն մուտք գործելուն եւ տեղամասային կեդրոնին մէջ եւ անոր մուտքին յարող տարածքին մէջ բռնութիւն գործադրելուն, դիտորդի լիազօրութիւններու իրականացման խոչընդոտելուն, կեղծ ընտրական քուէաթերթիկներ պատրաստելուն եւ տարածելուն: Ընտրախախտումներուն արձագանգեց նաեւ «Հայաստան» դաշինքի նախընտրական կեդրոնական գրասենեակի պաշտօնական ներկայացուցիչ Արամ Վարդեանեան, որ յայտարարեց, թէ Ազգային անվտանգութեան ծառայութեան,

Ոստիկանութեան եւ հեռացող իշխանութեան կողմէ մշակուած էր յատուկ գործողութեան ծրագիր «Հայաստան» դաշինքի Սիսիանի նախընտրական գրասենեակներու գործունէութիւնը անդամալուծելու նպատակով:

«Հակառակ անոր որ այս դէպքով յայտարարութեամբ հանդէս եկաւ մարդու իրաւունքներու պաշտպանը, անձամբ խօսեցայ Սիւնիքի մարզային եւ Սիսիանի ոստիկանապետներուն հետ, բոլոր պարագաներուն ալ գրասենեակներէն առնուազն մէկ անձի հարկադրաբար բերման ենթարկեցին առանց որեւէ հիմքի, զուտ իբր թէ բացատրութիւններ վերցնելու համար:

Շար.ը՝ էջ 6

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՆԿԱԳԱՐՏԷՁ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՍ ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԽՈՒՄ



Ազգային Եղիշե Մանուկեան քոլեճի բակին մէջ տեղադրուած «Մամիկն ու Պապիկը» մեծ ուրախութեամբ դիմաւորեցին քոլեճի մանկապարտեզի 2020 եւ 2021 տարիներու հունձք փոքրիկները, որոնք երգեցին, պարեցին ու վկայեցան բեմին վրայ տեղադրուած Արարատ լեռան լանջերուն:

Արդարեւ, 11 յունիս 2021-ին տարբեր եռուգեա կը տիրէր քոլեճի բակին մէջ: Մանկապարտեզի շրջանը աւարտած փոքրիկները թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, պաշտօնական հիւրերու, ծնողներու եւ հարազատներու ներկայութեամբ, անհամբեր էին ստանալու իրենց վկայականները:

Լիբանանի, Յայաստանի ու քոլեճի քայլերգներու երգեցողութենէ ետք փոքրիկները հիւրերուն բարի գալուստի խօսքեր արտասանեցին, իսկ 2020-ի հունձքը ներկայացուց «Իմ անուշ Հայաստան» պարը:

Ապա շրջանաւարտ փոքրիկները ներկաները փոխադրեցին Արցախ՝ տող առ տող ներկայացնելով Արցախի պատմական ու կենցաղը՝ «Պտոյտ մը դէպի Արցախ» խորագիրով:

2021-ի հունձքը հալարտ ու խանդավառ ներկայացուց «Չարթօնք» պարը, որմէ ետք երկու հունձքերը, աշխուժ ու եռանդուն, յաջորդաբար երգեցին «Ժառանգներն ենք Արցախի», «Չինւորիկն եմ ես փոքրիկ» եւ «Դարաբաղի բալիկն ենք» երգերը:

Քոլեճի վարիչ-մանկապարտիզպան Լուսին Գազանճեան իր խօսքին մէջ ըսաւ, որ հանդէսին թեման Արցախն էր, որ դժուար օրեր անցուց անցնող տարուան ընթացքին, եւ վարժարանի փոքրիկ աշակերտները իրենց այս հանդէսով կու գան իրենց սերը յայտնելու անոր:

Ան կշէց, որ հայ աշակերտները հայ ժողովուրդին ապագան են, հայ դպրոցի մէջ անոնք կը ստանան հայեցի դաստիարակութիւն, մանկապարտեզի դասարաններէն կը ծանօթանան հայոց պատմութեան, անոր հերոսներուն, որոնք կը դառնան փոքրիկներուն համար անպարտելի քաջեր եւ օրինակելի տիպարներ: Գազանճեան անդրադարձաւ կրթական անբնական տարուան՝ «Քորոնա»-ին պատճառով, շէշտելով սակայն, որ տնօրէնութիւն, ուսուցիչներ եւ ծնողներ ջանք չխնայեցին, որպէսզի կրթական տարուան ծրագիրը ամբողջութեամբ իրականացուի: Ան շնորհակալութիւն յայտնեց քոլեճի տնօրէնութեան, որ միշտ նեցուկ եղած է մանկապարտեզին, ինչպէս նաեւ՝ տէր եւ տիկ. Զեմեմեաններուն, որոնց նիւթական ու բարոյական աջակցութեամբ կ'արդիականանայ քոլեճի մանկամսուրը՝ ընդունելու 6 ամիսէն 3 տարեկան փոքրիկները:

Խօսքի աւարտին մանկապարտիզպանը շնորհակարտեց վկայական ստացած աշակերտները՝ անոնց մաղթելով յաջողութիւն եւ առողջութիւն:

Ապա տնօրէնութեան խօսքը արտասանեց քոլեճի կրթական տնօրէն

Անի Բագրատունի, որ շնորհակալութիւն յայտնեց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանին, որ անձամբ ներկայ գտնուեցաւ մանկապարտեզի հանդէսին, նաեւ՝ քահանայ հայրերուն, մանկապարտեզի բոլոր ուսուցչուհիներուն: Ան շնորհակարտեց քոլեճի մանկապարտիզպանը, որ այս տարի յաջողութեամբ ստացած է իր մագիստրոսի աստիճանը՝ իր միւս ծանր պարտաւորութիւններուն կողքին:

Անի Բագրատունի հանդէսը նուիրեց մեծ մայրերուն ու հայրերուն, որոնք ծնողներուն չափ նեցուկ կը կանգնին իրենց թոռներուն, շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, ղեկարոցին հանդէպ իրենց ունեցած վստահութեան համար: Խօսքի աւարտին ան երջանկութիւն, առողջութիւն եւ բախտաւորութիւն մաղթեց շրջանաւարտ փոքրիկներուն:

Ապա տեղի ունեցաւ վկայականաց բաշխում:

Առաջնորդ սրբազան հօր, քոլեճի կրթական եւ վարչական տնօրէններու եւ մանկապարտիզպանին ձեռամբ վկայական ստացան՝

Հունձք 2020. Այվազեան Բիւզանդ, Գալայեան Լեւոն, Գալայեան Տիգրան, Խալիլ Էնթ, Ղուկասեան Կարթն, Սարգիսեան Մարկոս, Կարդիվառեան Կալի, Կարդիվառեան Կարօս, Տաքեան Արմըն, Տէր Սարգիսեան Կարեն, Տեքիմեմեան Իվան, Էռօշեան Մուսթե Եւ Ֆարասեան Կարեն:

Հունձք 2021. Եազուպեան Էմմանել, Զարուբ Թերեզան, Մարց Ծարպէլ, Իսկէնտերեան Ռաֆ, Խաղբեան Իգապէլլա, Կարապետեան Չանի, Զաւանճեան Զարուբ, Միթիլեան Փաթիկ, Նաւմէ Միքայէլ, Պարսումեան Նարեկ, Սարգիս Զրիսթէլ, Տեմիթեան Տաթէլի եւ Տիմիթեան Գրիգոր:

Ապա առաջնորդ սրբազան հայրը յղեց իր պատգամը, իր ուրախութիւնը յայտնեց մատուցած սերունդին հետ զգեստելուն համար ու մաղթեց, որ յառաջիկայ տարին ըլլայ բնականօրէն կրթական տարեշրջան մը: Սրբազան հայրը շնորհակարտեց բոլորը՝ շէշտելով, որ հանդէսին առցանց պատրաստութիւնը անկասկած մեծ ճիգ խլած էր, որովհետեւ զգալի էր, որ աշակերտները արցախեան նիւթին քաջածանօթ էին: Սրբազանը յոյս յայտնեց, որ հայ ժողովուրդի զաւակներուն միջոցով յառաջիկային կարելի ըլլայ նուաճել մեր կրօն-ցուցածէն շատ անելի մեծ տարածքներ: Ան նաեւ շէշտեց, որ սփիւռքի մէջ հայապահպանման պատերազմ է ու պայքար, եւ հայ դպրոցը եղած է ու կը մնայ պատենշի վրայ: Ան գնահատեց անցնող տարուան կրթական ճիգը՝ շէշտելով, որ երբ աշակերտը չկորսաւ ղեկարգ գալ, հայ դպրոցը օգտագործելով արդիականութեան ընձեռած հնարաւորութիւնները՝ յաջողեցաւ դպրոցը տանիւ աշակերտներու տունները:

Իր խօսքի աւարտին սրբազան հայրը մաղթեց, որ սերունդներ այս հայաբոյր միջավայրին մէջ աճին, մեծանան ու նուաճեն բարձունքներ:

Համօ Օհանջանեան եղած է Հայ յեղափոխական դաշնակցութեան հիմնադիրներու անմիջական յաջորդ սերունդի անդամներէն մէկը անոնց գաղափարներով եւ աւանդութիւններով ներշնչուած, նոր սերունդները հիմնադիր սերունդին հետ միացընող կուռ շղթայի ամուր օղակներէն մէկը:

Օհանջանեան ծնած է Ախալքալաք, 1873-ին: Մկրտութեան անունը՝ Համազասպ, բայց եղած է Համօ անունով յայտնի, իսկ կուսակցական անունը եղած է Միտեան: Թիֆլիսի պետական համալսարանը աւարտելէն ետք, ուսանած է թշկութիւն շուկցերիոյ եւ Մոսկուայի մէջ: Աշակերտական տարիներէն սկսած՝ եղած է Դաշնակցութեան մէջ Զրիստափորին շուկչին տակ: Ուսանողական տարիներէն արդէն եղած է փայլուն ապագայ խոստացող դաշնակցական գործիչ՝ առանձնապէս մտերիմ կապերով կապուած Զրիստափորին հետ թէ՛ Կովկասի եւ թէ՛ Շուկցերիոյ մէջ: Լեւոն Թադէւսեանը (Պապաշան) իր յուշերուն մէջ պատմած է, որ 1898-ին Համոյին հետը միասին դաշնակցական Կարմիր խաչի մասնաճիւղ կազմած են Թելաի մէջ:

Համալսարանական շրջանը աւարտելէն ետք, Օհանջանեան կը հաստատուի Թիֆլիս, իբրեւ բժիշկ, եւ ամբողջ եւութեամբ կը նուիրուի հանրային-կուսակցական գործունեութեան՝ շուտով գրաւելով ղեկավար դիրքեր: Բարեկազմ, վայելուչ, բարեհամբոյր, լոյսալոյս, յարաբերութիւններուն մէջ՝ նուրբ եւ ասպետական, ամուր իր համոզումներով եւ չափազանց բծախնդիր դէպի բարոյական սկզբունքները՝ Համոն հաւասարապէս յարգուած ու սիրուած էր հասարակական բոլոր խաւերու ու ընկերներու, նոյնիսկ հակառակորդ կուսակցականներու կողմէ: Գործի ու անձնական մտերիմ յարաբերութիւններու մէջ էր նաեւ ռուս յեղափոխականներու հետ:

Իր անսպառ եռանդով ու գաղափարական պայքարի թափով Համոն առանձնապէս աչքի կ'իյնայ 1905-ին ռուսական յեղափոխութեան յաջորդող տարիներուն: Իբրեւ ՀՀԴ Արեւելեան Բիւրոյի անդամ եւ կուսակցութեան ներկայացուցիչ արտաքին աշխարհի առջեւ՝ Ե. Թոփճեանի, Գ. Խաժակի եւ ուրիշներու հետ ան ղեկավար եւ պայքարող դէմք էր հրապարակի վրայ՝ թէ՛ ներքին կենսքով եւ թէ՛ արաբերութիւններու մէջ օտարներու հետ: Եւ մասնաւորապէս մեծ հեղինակութիւն կը վայելէր երիտասարդութեան, մարտական ուժերու եւ աշխատաւորական շրջանակներու մէջ: Համոյի եռանդին ենք պարտական մեծ չափով նաեւ «Յառաջ» օրաթերթին ու «Յառաջ» մատենաշարը: Անգլահատելի կ'ըլլայ անոր դերը եւ «անշատական» ու «միդրանական» շարժումներու ժամանակ՝ իբրեւ բարոյական հեղինակութիւն բոլորին աչքին: Իր համոզումներով ու խառնուածքով Համոն կեդրոնական տեղ կը գրաւէր Դաշնակցութեան մէջ եւ ստեակ մը միութեան կապ էր աջ ու ձախ կողմերուն միջեւ:

Այդ դիրքին եւ «հաշտարար» ոգիի շնորհիւ՝ ՀՀԴ-ի Դ. Անդիանուր ժողովուն Համոն, Ռոստոմի կողքին, եղաւ մէկը այն ազդեցիկ դէմքերէն, որոնք վիժեցուցին Դաշնակցութեան դէմ լարուած դաւերը եւ անելի եւս ամրապնդեցին կուսակցութեան միասնական գործութիւնը: Ժողովէն ետք ալ նոյն եռանդով շարունակեց կուսակցական աշխատանքը ղեկավար դիրքերու վրայ: Եւ երբ սկսաւ հալածանքը Դաշնակցութեան դէմ, 1908-ին ցարական ոստիկաններու առաջին հարուածը իջաւ Համոյի գլխուն: Հարկւարուր ակնաւարտ մտաւորականներու հետ ան եւս նետուեցաւ բանտ, ուր մնաց միւլէն դատավարութիւն:

1912-ի փետրուարին Փեթերսպուրկի մէջ տեղի ունեցան ՀՀ Դաշնակցութեան մեծ դատավարութիւնը: 150 հոգի բերուած էին դատարանին առջեւ՝ Դաշնակցութեան անդամակցութեան ամբաստանութեամբ: Ռուսիոյ ամենայայտնի փաստաբանները ստանձնած էին դաշնակցականներու պաշտպանութիւնը: Չորս տարուան ընթացքին բազմա-հատոր մեղադրական նիւթ հաւաքուած էր, որուն մէկ մեծ մասը ուղղուած էր Համոյի դէմ: Պաշտպան փաստաբաններու որոշումով քանի մը հոգի միայն պետք էր խոստովանելին Դաշնակցութեան անդամ ըլլալը, եւ Համոն առաջինն էր անոնց մէջ: Դատարանին մէջ անոր արտասանած ճառը Դաշնակցութեան մասին խորունկ տպաւորութիւն գործեց ոչ միայն ունկնդիրներուն, այլեւ դատական կազմին վրայ: Արդիւնքը՝ տաժանակիր աշխա-

տանքի դատավճիռ Սիպե-րիոյ մէջ:

Պատերազմի եւ կամաւորական շարժման պատճառով, 1915-ին շատերու հետ Համոն ալ ազատ արձակուեցաւ, վերադարձաւ Կովկաս եւ կարճ ժամանակ յետոյ պաշտօն ստանձնեց Զաղաքներու միութեան ռազմաճակատի թշկա-առողջապահական բաժնին մէջ՝ նպատակ ունենալով առաջին հերթին օգնութիւն հասցնել պատերազմէն արէտահար հայերուն: Վասպուրականի ազատագրութենէն ետք, օրինակ, ան փութաց Վան՝ բժշկա-խնամատարական մեծ խումբի գլուխն անցած եւ Վանէն նահանջին, իր խումբով, շարունակեց խնամատարական գործը

Էջմիածնի մէջ:

Ցարական գահի տապալումէն ետք, 1917-ին Համոն նորէն կը նետուի կուսակցական գործունեութեան ասպարեզ, կ'ընտրուի Սահմանադիր ժողովի անդամ եւ կը մեկնի Փեթերսպուրկ, ուր 1918-ի փետրուար 5-ին պիտի բացուէր Սահմանադրական ժողովը: Սակայն վրայ կը հասնի պոլ-շեիկեան յեղաշրջումը՝ հոկտեմբերի վերջերը, եւ ան մնաց կէս ճանապարհին, Ռոստոմի մէջ, ուր իր հեղինակաւոր մասնակցութիւնը բերաւ հայկական գործերուն: Թիֆլիս կը վերադառնայ հայութեան կենսքի ամենաճգնաժամային օրերուն: Ռազմա-ճակատը փլած էր, թուրքերը անցած էին սահմանը եւ կը սպառնային նաեւ Կովկասի հայութեան բնաջնջման: Պաթումի մէջ տեղի կ'ունենային անի-մաստ բանակցութիւններ՝ կովկասեան Սեյմի եւ թրքական պատուիրակութիւններու միջեւ: Կովկասեան ազգերու միութիւնը փլշելու վրայ էր: Հայ ժողովուրդը կը մտար միմէկ, անօգնական՝ մահացու վտանգի առջեւ: Միակ իրական ուժը այդ օրերուն, որ թերեւս կարողանար աղէտի առաջն առնել, Գերմանեան էր: Եւ Հայոց Ազգային խորհուրդը շտապեց պատուիրակութիւն ուղարկել Պերլին, այդ առաքելութիւնը կը յանձնուէր Համոյին եւ սոցիալ-դեմոկրատ Արշակ Չոխրապեանին:

Բարեբախտաբար վրայ հասաւ ընդհանուր զինադադարը՝ 1918-ի նոյեմբեր 11-ին: Ահաւոր սպառնալիքը հեռացաւ հայկական հորիզոնէն: Փարիզ մեկնեցաւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը՝ Ահարոնեանի զըլ-խաւորութեամբ, որուն մէկ անդամը նշանակուեցաւ Համօ Օհանջանեանը: Այդ պաշտօնին վրայ ան մնաց միւլէն 1920-ի սկիզբը՝ մասնակից ըլլալով պատուիրակութեան բոլոր աշխատանքներուն:

Վերադառնալով Հայաստան՝ Համոն կը մտնէ Ա. Խատիսեանի դալիճին մէջ՝ իբրեւ արտաքին գործերու նախարար: Պոլշեիկներու մայիսեան խռովութեան պատճառով Խատիսեանի դալիճը կը հրաժարի, եւ մայիս 5-ին իշխանութիւնը կ'անցնի Բիւրօ-կառավարութեան ձեռքը: Համոն, որ

1919-ի աշնան ՀՀԴ-ի 9-րդ Անդիանուր ժողովէն ընտրուած էր Բիւրոյի անդամ, կը նշանակուի վարչապետ:

Բիւրօ-կառավարութիւնը պաշտօնի կոչուած էր կարճ ժամանակի համար, բայց մայիսեան խռովութիւնները զսպելէն ետք ալ դէպքերը հարկադրեցին իրեն միայն իշխանութեան գլուխը: Այնուհետեւ վրայ հասաւ պատերազմը, Հայաստանը ճգմուեցաւ թուրք-պոլշեիկեան միացեալ ուժերու ճնշման տակ: Համոյին վիճակուեցաւ այս դէպքերու դառնութեան բաժակը քամել ցմրուր, միւլէն որ նոյեմբերի վերջերը իշխանութիւնը փոխանցեց նոր կառավարութեան:

Խորհրդայնացումէն ետք, երբ Համոն խումբ մը ընկերներու հետ հեռացաւ Հայաստանէն, վրացական սահման չհասած՝ ձերբակալուեցաւ պոլշեիկներուն կողմէ եւ փոխադրուեցաւ Երեւանի բանտը, ուրկէ հազարաւոր ուրիշներու հետ ազատեցաւ միայն փետրուար 18-ի ապստամբութեան շնորհիւ: Ապա տարագրուեցաւ Պարսկաստան եւ հոնկէ՝ Եգիպտոս, Գահիրէ, ուր մնաց միւլէն վերջ՝ զբաղելով թշկութեամբ, բայց ժամանակին եւ ուժերուն մեծ մասը յատկացնելով հանրային կուսակցական գործունեութեան՝ իբրեւ Դաշնակցութեան ղեկավար մարմնի անդամ եւ Համազգայինի նախագահ՝ յարգուած ու սիրուած բոլորին կողմէ:

Համօ Օհանջանեան կը մահանայ 31 յուլիս 1947-ին եւ, Գահիրէի հայութիւնը, համազգային յուղարկաւորութեամբ, ճանապարհ կը դնէ զինք դէպի յաւիտենականութիւն:



«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ ԽԻՍՏ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ . . .

Շարունակում 3-րդ էջին

Յատկանշական է, որ իրաւապահները ունեին բոլոր հիմքերը սպասելու մինչեւ ժամը 20:00, սակայն այս ապօրինութեան իրական նպատակը ուղղում էր մինչեւ քուէարկութեան աւարտը խափանել գործունեութիւնը», շեշտեց ան՝ կոչ ուղղելով դիտորդական առաքելութիւն իրականացնող կազմակերպութիւններուն՝ ուշադրութիւն դարձնելու իրավիճակին:

«Հայաստան» դաշինքը այլ յայտարարութեամբ մը Հայաստանի Հանրապետու-

թեան Կեդրոնական ընտրական յանձնախումբին ուշադրութեան յանձնեց այն, որ, հակառակ անոր նախազգուշացումին, «Քաղաքացիական պայմանագիր»-ն ու Նիկոլ Փաշինեանը խախտեցին լռութեան օրոտան կարգը:

Նշուեցաւ, որ 19 յունիսէն տարբեր վայրերու մէջ սկսած են մեծ տպաքանակով տարածել «Հայաստան» դաշինքի ղեկավարներուն վերաբերեալ վիրաւորանք եւ ատելութիւն պարունակող նիւթեր: «Մեր



տեղեկութիւններով, այս խայտառակ գործընթացը կազմակերպուած է յատկապէս սորոսական կազմակերպութիւններուն կողմէ եւ հեռացող իշխանութեան թոյլտուութեամբ: Աւելին, Նոյն ժամանակահատուածին տեղադրուած են նաեւ օրէնքով սահմանուած կարգի ակնյայտ խախտումով «Հանրապետութիւն» կուսակցութեան պաստառներ:

«Հայաստանի պատմութեան մէջ երբեք չեն եղած նման ծաւալի ընտրական գործընթացի խախտումներ, եւ կը իրաւիբեմ բոլոր միջազգային դիտորդական առաքելութիւններու ուշադրութիւնը այս շարունակական խախտումներուն վրայ: Կը դիմենք ոստիկանութեան՝ սեղմ ժամկետներու ընթաց-

ԱՐՄԵՆ ՉԱՐՉԵԱՆ ՀԱՍՏԱՏԵՑ, ՈՐ ԶԵՐԲԱԿԱՆՈՒՄ Է ԶԱՂԱՅԱԿԱՆ ՆԴԱՏԱԿՆԵՐՈՎ

20 յունիսին «Հայաստան» դաշինքի կեդրոնական ընտրական գրասենեակին մէջ մամուլի ասուլիս տուին «Հայաստան» դաշինքի պաշտօնական ներկայացուցիչ Արամ Վարդեանեան, «Իզմիրլեան» բժշկական կեդրոնի տնօրէն, «Հայաստան» դաշինքի անդամ Արմեն Չարչեան եւ փաստաբան Էրիկ Ալեքսանեան:

Չարչեան նշեց, որ զինք մեկուկէտ օր ապօրինաբար պահեցին անազատութեան մէջ: «Ես բնաւ չեմ ուզեր անդրադարձ կատարել հարցի իրական կողմին, ես երկու բան ունիմ ըսելիք՝ բացարձակապէս անընդունելի կը նկատեմ այն մեղադրանքի կասկածը, որ առաջարկուած է ինծի, քանի որ ես բաւականա-



ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Անգլիոյ Նախկին վարչապետներէն - Տեղափոխուած տառեր:
- Աւետիք Իսահակեանի «Կարօն» - Պաւ:
- Մոլեբիւ - Իտալական նաւահանգիստ:
- Պաւ իզպանի գործիչ - Դիմազուրկ:
- Եւրոպական երկիր - Հաստատական պատմական:
- Անորոշ յօդ, Հայաստանի գետերէն:
- Հիւսիսեղ պտուղ - Ոխ, բարութիւն:
- Մեծ մայր - Դրկից գիրք - Կրկին:
- Ինքնագլուխ - 1001 եկեղեցիներու քաղաք:
- Առաստա - Իրերայաջորդ տառեր - Արեւմտեան գիւտորական ուխտ մը:
- Եւրոպական հանրապետութիւն - Գետաւոր:

ՈՐԱԳԱՅՑԱԾ

- Չուան - Ըմբռնելի, հասկնալի:
- Շերտը Զոյլի - Ելնական բժիշկը - Տառի մը անունը:
- Բազմիւ - Երբեմնի պոլսահայ մեծատուններու տրուած տիտղոս:
- Իգական օտար անուն - Շուգայ:
- Համա, կուրդին - Ամաւորաբնակ:
- Գետ մը՝ Թիպէի եւ Հնդկաստանի մէջ - Սպասէ:
- Կենդանական սեռ - 100 տարի - Այբուբենէն:
- Երկվայրկեան - Գամ - Ձախտակի (իսկ):
- Հասկնալից, տարեկից - Հայ գրական:
- Հերկ - Ուշաւա, տնտես:
- Նկարչական կարմիր ներկ - Կանգուն երկանաքար:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

			7		6						
			4			5	1			6	
		8			9				3		
2				3	4		7				
5										9	
		8				9				4	
			7		3					8	
6			1						2		
	1									7	

Երրորդական եւ ուղղահայեաց օ շարքերով եւ սիւնակներով (օճՅ) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւր օ լատինական հաշուող օ բաժիններէ (ՅՅ): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր լատինականի մէջ թուանշան մը գտնուել՝ այնպէս մը, որ իւրիւրական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ օ լատինականի մէջ իւրաքանչիւր բաժին ունենայ ձեւ օ թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խաղով՝ ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ լատինականներուն մէջ գտնուողած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԻ ԽԱԳԵՐՈՒ ՆՈՒԹՈՒՄՆԵՐԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք	Պ	Ա	Խ
2	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք	Պ	Ա	Խ
3	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք	Պ	Ա	Խ
4	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք
5	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք
6	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք
7	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք
8	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք
9	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք
10	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք
11	Պ	Ա	Խ	Տ	Ղ	Ա	Ե	Բ	Ե	Ք	Ք

քին, ընդհուպ մինչեւ քանի մը ժամուան ընթացքին, յայտնաբերել «Հայաստան» դաշինքի ղեկավարներուն վերաբերեալ վիրաւորանք եւ ատելութիւն բովանդակող նիւթեր պատրաստողները, տարածողներն ու պատուիրատուները եւ անյապաղ բերման ենթարկել զանոնք, մանաւանդ որ համացանցին վրայ արդէն առկայ են համապատասխան տեսանիւթեր: Հակառակ պարագային կը գնահատենք, որ այդ գործընթացը կազմակերպուած է եւ կ'ուղղորդուի իշխանութիւններուն կողմէ», նշուեցաւ յայտարարութեան մէջ:

Նաչափ կը տիրապետեմ օրէնքներուն եւ որեւէ յանցանք, օրէնքի խախտում եւ երբեք չեմ կատարած իմ գործողութիւններովս, հետեալաբար, ինծի վերագրուած գործը պարզապէս փուչիկի նման էր», յայտնեց ան:

Արմեն Չարչեան նշեց, որ իր ձեռքբաղութիւնը ունի բացառապէս քաղաքական եղանակ կախեալ է իր քաղաքական դիրքորոշումէն: Յայտնեց, որ Չարչեան ձեռքբաղութեան ուղեւոր օր՝ ընտրողի ազատ կամքը խոչընդոտելու կասկածով: Ցատուկ քննական ծառայութիւնը հաղորդեց, որ ըստ քրեական գործի նիւթերով՝ «Հայաստան» դաշինքի թեկնածուն իր ղեկավարած բժշկական կեդրոնի աշխատակիցներուն պարտադրած է մասնակցի Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններուն:

Պատգամաւորի թեկնածուի փաստաբանները ձեռքբաղութեան դէմ բողոք ներկայացուցին՝ պնդելով, որ ոչ մէկ փաստացի տուեալ կայ: 20 յունիսի առաւօտեան ան ազատ արձակուեցաւ:



ՆՅԱՐԻ՝ «ՎԱՆԱՅ ՁԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 եւ 95 MHz

- 7.00 Զայլերգներ / Բարի լոյս
- 7.15 Սփիւռեան հանդարտ երգեր
- 7.30 Բարեւ
- 8.30 Լուրեր
- 9.00 Բարեւ
- 9.30 Բարեւ հարցազրոյց. հիւր՝ Նիկոլ Փաշինեան (ուղիղ դիմաւորում)
- 10.00 Նոր երգեր
- 10.30 Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ դիմաւորում)
- 10.45 Հայրենի խանդավառ երգեր
- 11.30 Յանդուած - Քաղաքական մեկնաբանութիւն
- 12.00 Արդի մշակութային ժողովրդային երգեր
- 12.30 Խմբերգներ
- 1.00 Ազգային-հայրենասիրական երգեր
- 1.30 Լուրեր
- 2.00 Յիշատակելիները (Արցախեան նորոյեայ հերոսներ)
- 2.05 Յեղափոխական երգեր
- 3.00 Քըլ եոմ պիտմու. հիւր՝ Հայր Փիլիքը Հաննա (ուղիղ դիմաւորում)
- 4.00

- 4.30 Օ.Թ.Վ.ի հայերէն լուրերու ուղղակի սփռում
- 4.50 Խանդավառ երգեր
- 5.00 «Վանայ Ձայն»-ը երեկոյեան
- 5.05 Նոր երգեր
- 5.30 «Շողարձակ» (Շողիկ Թորոսեանի հետ)
- 6.30 Լուրեր
- 6.50 Վերամշակուած՝ Remix երգեր
- 7.30 Խանդավառ երգեր
- 8.00 Օրուան երգիչ (Ատիս Հարմանեան)
- 8.30 Լիբանանահայ երգիչներու կատարումներ
- 9.00 Հեղինակային երգեր
- 9.30 Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
- 9.45 Սփիւռեան երգեր
- 10.00 Ամուսններ եւ եղանակներ
- 10.00 Golden oldies
- 12.00 Յեղափոխական երգեր
- 2.00 Եւրոպայի երգեր
- 3.00 Կրկնութիւններ
- 4.45 Հայերէն այլաբան երգեր
- 6.00 Հայկական երաժշտութիւն ժընտի

«Վանայ Ձայն»-էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնդրել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժինին մէջ (voiceofvan.net):

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՀՄԸՄ-ՈՒԱՀՏԵԹ ՄԱՐԸԺ՝ 1-0

Լիբանանի ֆուբալի Գ. դասակարգի ախոյեանութեան 11-րդ եւ նախավերջին հանգրուանի մըրցումներուն, որոնք տեղի ունեցան նախորդ շաբաթավերջին, ՅՄԸՄ-ի ֆուբալի ներկայացուցչական խումբը 1-0 արդիւնքով բաւական կարեւոր յաղթանակ մը արձանագրեց Ուսիտեթ Մարըժ խումբին դէմ:

ՅՄԸՄ-ի եւ մրցումին միակ կողմ նշանակեց Սերժ Օսքեան՝ 60-րդ վայրկեանին: Վարդան Պոյաճեան կատարեց նշանակուած այս կողին **Էսիսը**:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, ՅՄԸՄ թէեւ խոյս տուաւ վերջին դիրքէն, սակայն Դ. դասակարգ փոխադրուելու վտանգը ցարդ չէ թթափած, եւ ՅՄԸՄ անպայման կարիքը ունի յաւելեալ երեք կէտերու՝ մնալու համար Գ. դասակարգին մէջ:

Վերջին հանգրուանի մրցումներուն ՅՄԸՄ-ի մըրցակիցը պիտի ըլլայ Իթթիհատ Յարեթ Նամէ:

Ստորեւ՝ դասաւորման պատկերը.	ԿԷՏ
1.- Շապապ Մաժտալ Այնճար	20
2.- Իթթիհատ Յարեթ Նամէ	20
3.- ՅՄՄ	20
4.- Չամալեք	15
5.- ՅՄԸՄ	12
6.- Նըժոււմ	12
7.- Ուսիտեթ Մարըժ	12

ԱՐՁԱԿԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ՀՄԸՄ ԱՆԹԻԼԻԱՍ-«ԵՈՒ.ԷՍ.ԺԻ.-1875»՝68-37

Լիբանանի պասքէթպօլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան 11-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, նախորդ շաբաթավերջին ՅՄԸՄ Անթիլիասի կազմը արձանագրեց իր 5-րդ յաղթանակը՝ 68-37 արդիւնքով պարտութեան մատնելով «ԵՈՒ.ԷՍ.ԺԻ.-1875»-ը (21-15, 46-20, 59-27 եւ 68-37):

ՅՄԸՄ-ի կազմը, որ յետաձգուած մրցում մը ունի կատարելիք եւ կրած է 5 կէտ, այժմ իր տրամադրութեան տակ ունի 15 կէտ եւ կը գրաւէ 5-րդ դիրքը:

21-ական կէտ ունին Ռիատի Պէյրութ (առաջին) եւ Պէյրութ (երկրորդ):

Իսկ Յուսիս 20 կէտով կը գրաւէ երրորդ դիրքը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ՊԷՅՐՈՒԹ - ՀՄԸՄ ՊԷՅՐՈՒԹ՝ 74-63



Լիբանանի պասքէթպօլի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, ՅՄԸՄ Պէյրութ, որ Շիաիի մարզադաշտին վրայ հիւրը եղաւ Պէյրութին, անկէ կրեց 74-63 արդիւնքով պարտութիւն մը (8-9, 26-28, 45-50 եւ 74-63): ՅՄԸՄ-էն 19 կէտ նշանակեց Զերիմ ժառայել, մինչ Նոյնքան կէտ նշանակեց Պէյրութէն Փաթրիք Պու Ապպուն:

Մրցումին իրաւարարներն էին Ճենիֆըր Ամմուրի, Սերճիօ Զասսապ եւ Ռոժէ Օպէյտ:

ԹԵՂՈՒՆՏՕ

ԱՄԻՈՅ 24-ՐԴ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՐԷԿ ԳԻՇԵՐ ՀԱՍԱԻ ԻՐ ԱՐԱՐՏԻՆ՝ «ՆՈՒՀԱՏ ՆԱՌՖԱԼ» ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԷՋ

Երեկ գիշեր իր աւարտին հասաւ «Նուհատ Նաուֆալ» մարզահամալիրին մէջ (2ուք Սիքայէլ) տեղի ունեցած Ասիոյ թեքուանոյի 24-րդ ախոյեանութիւնը, երբ կատարուեցան վերջին օրուան աւարտական մրցումները եւ որոնք յաջորդեց անոր փակման պաշտօնական հանդիսութիւնը (մանրամասնութիւնները՝ վաղուան մեր մարզական էջով): Անոր իրենց մասնակցութիւնը բերին 38 երկիրներ Ասիայէն, Եւրոպայէն, Ափրիկէէն, Ամերիկայէն: Այս ախոյեանութեան իրենց մասնակցութիւնը բերող բոլոր մարզիկներն ալ իրենց ամէն կարելին ըրին՝ իրենց երկրին համար մետալներ ապահովելու: Այստեղ նշենք, որ Լիբանանի համար առաջին մետալը (պրոնզ) ապահովեց Մարք Խալիֆէ (54 քկ)՝ ազատ ոճի մրցումներուն: Լիբանանցի մարզիկներուն ապահոված մետալներուն կ'անդրադառնանք մեր վաղուան թիւով:



ՖՈՒԹՍԱԼ

ՀՄԸՄ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԻՐԵՆՑ II ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ԿՈԼԵՐԸ ՆՈՒԻՐԵՑԻՆ ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Լիբանանի ֆուբալի Գ. դասակարգի ախոյեանութեան 5-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, նախորդ շաբաթավերջին ՅՄԸՄ Պուրճ Յամուտի կազմը մրցեցաւ դասաւորման վերջին դիրքին վրայ գտնուող ժամուրի դէմ:

Թէեւ ՅՄԸՄ փորձեց մրցումը յետաձգել, սակայն Լիբանանի ֆուբալի ֆետերասիոնը յայտնեց, որ անկկապեօք է տեղի ունենայ իր ճշդուած թուականին:

Նշենք, որ ՅՄԸՄ կ'ուզեր մրցումը յետաձգել՝ նկատի ունենալով, որ ՅՄԸՄ Պուրճ Յամուտի մասնաճիւղի անդամներէ՝ Ներսէ Ներսէսեան մահացած էր՝ բաւական երկար ժամանակ հիւանդութեան դէմ պայքարելէ ետք:

Ստիպուած, ՅՄԸՄ-ի մարզիկները սեւ թեւակապերով դաշտ ներկայացան եւ առ ի յարգանք մասնաճիւղի իրենց մահացած անդամին, մրցումէն առաջ մէկ վայրկեան յոտնկայս լռու-

թեամբ յարգեցին անոր մահուան յիշատակը:

Մրցումը աւարտեցաւ ՅՄԸՄ-ի կազմին մեծ եւ տպաւորիչ յաղթանակով՝ 11-0 արդիւնքով:

ՅՄԸՄ-ի անպատասխան կողերը նշանակեցին Զամալ Աարաժ (3-րդ, 19-րդ, 35-րդ եւ 39-րդ), Աւագ Պալապանեան (9-րդ եւ 38-րդ), Սիքայէլ Նուաշխարիեան (14-րդ), Սերժ Մելիքեան (21-րդ), Ժոզեֆ Նատեր (24-րդ), Ներսէ Քիլիսանճեան (27-րդ) եւ Յարուք Մում-ջողեան (34-րդ):

Անոնք բոլորն ալ անխտիր իրենց նշանակած բոլոր կողերը նուիրեցին ՅՄԸՄ-ական եղբոր յիշատակին:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, ՅՄԸՄ ամրապնդեց պարագլուխի իր դիրքը՝ իր տրամադրութեան տակ ունենալով 13 կէտ: Անոր ետին գտնուող Մուաւատ ունի 10 կէտ:

ՀԱՅԱՏԱՆԻ 16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ 4-0 ԱՐԴԻՒՆՔՈՎ ՅԱՂԹԵՅ ԼԻԲԱՆԱՆԻՆ

Նախորդ շաբաթավերջին Յայաստանի ֆուբալի ֆետերասիոնի ֆուբալի ակադէմիային մէջ մեկնարկը տրուեցաւ «ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. »-ի զարգացման ֆուբալի մրցաշարքին: Յայաստանի ֆուբալի 16 տարեկանէն վար հաւաքականը, որ մրցեցաւ Լիբանանի իր հասակակից խումբին դէմ, արձանագրեց 4-0 արդիւնքով յաղթանակ մը:

Յայաստանի չորս անպատասխան կողերը նշանակեցին Գագիկ Սիմոն-



եան (5-րդ), Սամսոն Յակոբեան (68-րդ եւ 90+1-րդ) եւ Գոռ Վանոյեան (86-րդ):

Նշենք, որ հաւաքականին գլխաւոր մարզիչն է Վահէ Յարութիւնեան:

ՔԱՍՓԵՐ ՔՈԶԼՈՎՍԻՔԻ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՄԷՆԷՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԿԻՑԸ

Սպանիա-Լեհաստան ֆուբալի մրցումին ընթացքին (1-1), որ կ'իյնայ «Եւրօ-2020»-ի մրցաշարքի խմբակներու որութեամբ տեղի ունեցող Ա. հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ (Ե. խմբակ), իբրեւ պահեստի մարզիկ դաշտ ներկայացած լեհ միջնապահ Զապիեր Զոգլովսքի, հանդիսացաւ եւրոպայի ֆուբալի ախոյեանութիւններուն ամենէն երիտասարդ մասնակիցը (17 տարեկան եւ 246 օր):

Այսպիսով, ան բարելաւեց շուրջ վեց օր առաջ անգլիացի միջնապահ՝ Ճուտ Պելլիսկեմի հաստատած մրցանիշը (17 տարեկան եւ 349 օր):



ՄԵՄՖԻՍ ՏԵՓԱՅ ՄԻԱՅԱԻ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ

Քաթարլուական Պարսելոնայի մամլոյ քարտուղարութիւնը նախորդ շաբաթավերջին յայտարարեց, որ նետերլանտներու ֆուբալի ազգային խումբի 27 տարեկան յառաջապահ Մեմֆիս Տեփայ միացաւ իրենց կազմին: Ֆրանսական Լիոնի նախկին ֆուբալիստին պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ 2023 թուականը: Նկատի ունենալով, որ ան իր երկրին ֆուբալի ազգային խումբին հետ այժմ կը մասնակցի «Եւրօ-2020»-ի ֆուբալի մրցաշարքին, անոր շնորհահանդէսը տեղի պիտի ունենայ այս ախոյեանութեան աւարտէն ետք: 2017-ին Լիոնի միացած Թեփայ անոր հետ կատարեց 36 մրցում, նշանակեց 20 կոլ եւ կատարեց 10 **Էսիսը**:



ԿՈՓԱՄԱՐՏ

ՀԱՅ ԿՈՓԱՄԱՐՏԻԿԸ ԹԵՔՆԻՔ ՆԱՔ ԱՈՒԹՈՎ ՅԱՂԹԵՅ ԻՐ ԱԶԻՐԷՅՃԱՆՑԻ ՄՐՑԱԿԻՑԻՆ



Իտալիոյ մէջ տեղի ունեցող Եւրոպայի կռիւամարտի 22 տարեկանէն վար ախոյեանութեան ծիրին մէջ, Յայաստանի ներկայացուցիչներուն յաղթարշաւը կը շարունակուի:

60 քկ դասակարգին մէջ, Ժորժիկ Մարութեան, իր առաջին մենամարտին, բացառիկ յաղթանակ մը արձանագրեց իր ազրպէյճանցի մրցակիցին՝ Ժալալ Կառպանովի դէմ:

Առաջին երկու **ռաունտ**ներուն, հայրենի կռիւամարտիկը ունեցաւ հսկայական առաւելութիւն մը եւ անոր հարուածներէն մէկուն ընթացքին, անոր մրցակիցը ստացաւ յօնքի պատռուածք, որմէ ետք իրաւարարը դադրեցուց մենամարտը:

Ասկէ ետք, բժիշկները ազրպէյճանցիին արտօնութիւն չտուին շարունակել մենամարտը եւ նկատի ունենալով, որ Մարութեան նաեւ կ'ետերու մեծ առաւելութիւն ունէր, յաղթանակը շնորհուեցաւ հայ մարզիկին, որ այսպիսով **թեքնիք Նաքաուրթ**ով մը աւարտեց իր այս մենամարտը, այս մասին յայտնեց Յայաստանի կռիւամարտի ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը:

Տպաւորիչ յաղթանակ արձանագրեց նաեւ Արմէն Մաշակարեան (69 քկ), որ յաջողեցաւ ապահովել քառորդ աւարտականի իր տոմսը:

«ԵՐՕ-2020»

- ԻՏԱԼԻԱ ԿՐԿՆԵՅ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՇԱՐՔԻ ԻՐ ՄՐՑԱՆԻՇԸ՝ 30 ՄՐՑՈՒՄ - ԹՈՒՐԿԻԱ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ԵՒ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ ԱՌԱՆՑ ԿԷՏԻ

«Եւրօ-2020»-ի ֆուբալի մրցաշարքին ծիրին մէջ, երեկ գիշեր կատարուեցան երկու մրցումներ՝ Ա. խմբակին մէջ:

Իտալիա, որ արձանագրեց իր երրորդ յաղթանակը, 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով Կալէսը, բաւական հանգիստ ծնեով ապահովեց յաջորդ հանգրուանի՝ **փլեյ օֆի** մրցումներուն իր տոմսը:



Մրցումին միակ կողմ նշանակեց Մաթեօ Փեսսինա (39-րդ), մինչ Կալէսի մարզիկներէն մէկը 55-րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացաւ:

Իր արձանագրած այս յաղթանակին շնորհիւ, Ռուպերթօ Մանչինիի գլխաւորած կազմը յաջորդաբար 30-րդ մրցումն ըլլալով մնաց անպարտելի:

Իտալացիները վերջին անգամ պարտութիւն կրած էին 10 նոյնեքեր 2018-ին՝ Փորթուգալէն (1-0): Նոյն խմբակին մաս կազմող Թուրքիա, որ կրեց իր երրորդ յաջորդական պարտութիւնը, այս անգամ՝ Չուիցերիայէն՝ 3-1 արդիւնքով, հրաժեշտ տուաւ մրցաշարքին՝ առանց ոչ մէկ կէտ ապահովելու:

2. խմբակին մէջ, բաւական հետաքրքրական ճակատումի մը ընթացքին, Գերմանիա 4-2 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Փորթուգալի դէմ:




Քրիսթիանօ Ռոնալտօ նշանակեց Փորթուգալի եւ մրցումին առաջին կողմ՝ 15-րդ վայրկեանին:

Նոյն խմբակին մէջ, Ֆրանսա ոչ համոզիչ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Յունգարիոյ հետ:

66-րդ վայրկեանին Անթուան Կրիզման նշանակեց Ֆրանսայի հաւասարութեան կողմ:

Այսօր՝ երկուշաբթի, 21 յունիսին տեղի կ'ունենան հետեւեալ մրցումները (ժամերը՝ Պէյրութի ժամանակացոյցով).	ԺՄԱ
Գ. ԽՄԲԱԿ Մակեդոնիա-Նետերլանտներ	19:00
Ուքրանիա-Աւստրիա	19:00
Բ. ԽՄԲԱԿ ․ Ֆինլանտա-Պելճիքա	22:00
Ռուսիա-Դանիա	22:00

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ
ՌԱՅԻՍԻ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ



Իրանի դատական իշխանության ղեկավար սեյիտ Իպրահիմ Ռայիսի ուրբաթ օր տեղի ունեցած նախագահական ընտրության յարթակակ արձանագրելով դարձաւ Իրանի նախագահ:

Ընտրութիւններուն մասնակցած են 28 միլիոն 933 հազար քուէարկողներ: Մասնակցութեան համեմատութիւնը եղած է 48,8 առ հարիւր: 60 տարեկան Ռայիսի ստացած է 17 միլիոն 933 հազար քուէ, այսինքն՝ քուէներուն 62 առ հարիւրը:

Երկրի գործող նախագահ Զասան Ռուհանի հանդիպում ունեցաւ եւ շնորհաւորեց իր իրաւայաջորդ Ռայիսին:

Իրանի արտաքին գործոց նախարար Մոհամետ ժաւատ Չարիֆ ընտրեալ նախագահը «ողջամիտ» կոչեց եւ յայտնեց, որ ան Իրանը «լաւ կերպով» պիտի ղեկավարէ:

Իրանի նախագահը գերագոյն հոգեւոր պետէն ետք երկրին մէջ երկրորդ կարեւորագոյն պաշտօնն է, որ կ'ընտրուի չորս տարուան ժամկետով՝ ընդհանուր ընտրութիւններու միջոցով: Պաշտօնին ընտրուած անձը չի կրնար աւելի քան երկու անգամ պաշտօնավարել: Ընտրութեան ընթացքին յաղթանակ արձանագրելու համար թեկնածուն պէտք է ապահովէ ընտրողներուն ծայներու մեծամասնութիւնը՝ աւելի քան 50 առ հարիւրը:

Նշենք, որ սեյիտ Իպրահիմ Ռայիսիի դէմ ամերիկեան պատժամիջոցներ հաստատուած են:

Իսրայէլի վարչապետ Նեֆթալի Պենետ Երէկ յայտնեց, որ Իրանի նորընտիր նախագահը «վատահամբաւ» է «վարչակարգին ընդդիմախօսները մահապատիժի ենթարկած մահուան յանձնախումբերուն մէջ իր դերակատարութեան համար, ան անձնապէս պատասխանատուութիւն կը կրէ քանի մը հազար իրանցի անմեղ քաղաքացիներու սպանութեան համար»:

«Ռայիսիի՝ Իրանի նախագահի պաշտօնին ընտրուիլը արթնալու ազդակ է գերտնտրութիւններուն: Կարելի չէ, որ դահիճներու վարչակարգը զանգուածային ոչնչացման գէնք ունենայ», ըսաւ ան իր գլխաւորած իսրայէլեան կառավարութեան առաջին նիստին ընթացքին:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Եաիր Լափիտ մէկ օր առաջ Ռայիսին կոչած էր «ծայրայեղական, որ հակուած է ահաբեկչութեան»:

ԸՍՏ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻ
ՄՊԱՅԱԿՈՅՏԻ ՊԵՏԸ ՄԵԿՆԱԾ Է
ՌԻԱՇԻՆԿԹԸՆ. ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱՅ
ԵՆ ԻՐԱՆՆ ՌԻ ԿԱԶԱՆ

Իսրայէլեան «Ետիոթ Աիրոնոթ» օրաթերթը հաղորդեց, որ իսրայէլեան բանակի սպայակոյտի պետ Աւի Զոխաւի շաբաթ կէս գիշերէն ետք «աշխատանքային կարելոր գործով» վեցօրեայ այցելութեամբ մեկնած է Միացեալ Նահանգներ եւ անոր օրակարգին վրայ են Իրանն ու Կազան:



Ան իր այցելութեան ընթացքին աշխատանքային հանդիպումներ պիտի ունենայ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութենէ եւ ամերիկեան բանակէն պաշտօնատարներու, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու նախագահի ազգային անվտանգութեան խորհրդատու Էնթ Սալիվանի եւ այլ պաշտօնատարներու հետ:

Օրաթերթը նշեց, որ Զոխաւի «պիտի քննարկէ օրակարգի վրայ եղող հասարակաց հարցեր, որոնց շարքին՝ իրանեան հիւլէական սպառնալիքին, Միջին Արեւելքի մէջ տեղաւորուելու Իրանի ջանքերուն, Զըգալլայի հզօրացման ջանքերուն, ճշգրիտ հըրթիներու հետեանքներուն ու միացեալ ուժ հաստատելու վերաբերող հարցեր»:

«Յաւելեալ կարելոր հարց մը պիտի ըլլայ իսրայէլեան բանակին հեռակառավարուող ռումբերու եւ «Դարպասներու պահակ» գործողութեան ընթացքին օգտագործուած «Երկաթեայ գմբեթ» համակարգի հակաօդային պաշտպանութեան հրթիռներու պահեստներուն մատակարարում կատարելու իսրայէլեան դիմումը», աւելցուց «Ետիոթ Աիրոնոթ»:

Իսրայէլեան «Մաարիւ» օրաթերթը իր կարգին նշեց, որ իսրայէլեան բանակի սպայակոյտի պետի Միացեալ Նահանգներ այցելութիւնը Նաֆթալի Պենետի՝ Իսրայէլի վարչապետի պաշտօնը ստանձնելէն ետք իսրայէլացի պաշտօնատարի մը առաջին այցելութիւնն է Միացեալ Նահանգներ:

Միւս կողմէ, «Սքայ Նիուզ» հաղորդեց, որ իսրայէլեան կառավարութիւնը մէկ տարիով երկարաձգած է իսրայէլեան բանակի սպայակոյտի պետ զօր. Զոխաւիի պաշտօնավարութիւնը:

ՉԱԽՈՒՇՈՂԼՈՒ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է
ԴԱՍԵՐ ՔԱՂԷ ԱՆՑԵԱԼԷՆ»

Թուրքիան յոյս ունի, որ Զայաստանի նոր ղեկավարութիւնը դասեր պիտի քաղէ անցեալէն: «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Չաւուշօղլու՝ մեկնաբանելով Զայաստանի մէջ ընթացող խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները:

«Մենք Զայաստանի մէջ ընտրութիւնները կը նկատենք այդ երկրի ներքին գործը: Զայաստանի նոր ղեկավարութիւնը պէտք է դասեր քաղէ անցեալէն», ըսած է Չաւուշօղլու՝ խօսք արտասանելով Անթալիոյ մէջ տեղի ունեցած դիւանագիտական խորհրդաժողովին, որ սըփուաւ է անոր «Թուիթթը»-ի էջին վրայ:

«Անատոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Չաւուշօղլու խորհրդաժողովի ընթացքին անդրա-

դարձած է այն պետութիւններուն, որոնց հետ Անգարան խնդիրներ ունի:

«Միջերկրական ծովը պէտք է բարեկամութեան ծովու վերածուի: Անոր համար անհրաժեշտ են նոր մօտեցումներ», ըսած է Չաւուշօղլու՝ ընդգծելով, որ Յունաստանը պէտք է հրաժարի սադրիչ քայլերէ:

«Եւրոպական Միութիւնը պէտք է վերջապէս վերադառնայ բանակցութիւններու սեղան եւ ձեռնարկէ շօշափելի քայլերու: Անգարան հաւատարիմ է յարաբերութիւններու զարգացման: Յունաստանը պէտք է հրաժարի սադրիչ գործողութիւններէ: Իսկ Զայաստանը, իր դրացիներու տարածքին նկատմամբ ոտնձգութիւն կատարելու փոխարէն, պէտք է բնական յարաբերութիւններ հաստատէ անոնց հետ», ըսած է Չաւուշօղլու:

ՊՈԼՍՈՅ ԶՐԱՆՑՔԻՆ ՀԻՄԸ
ՊԻՏԻ ԴՐՈՒԻ 26 ՅՈՒՆԻՍԻՆ

Պոլսոյ ջրանցքին հիմը պիտի դրուի 26 յունիսին: Այս մասին կը հաղորդէ թրքական «Զապերթիքը» պատկերասփիւռի կայանը:

Թրքական պատկերասփիւռի կայանին հաղորդումով, Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան ներկայ պիտի ըլլայ արարողութեան: «Իսթանպուլի ջրանցք» նախագիծը պիտի սկսի վեց կամուրջներէն մէկուն շինարարութեամբ, որ պիտի կառուցուի ձեռակերտ ջրային տարածքի վրայ:

Ջրանցքը կը նախատեսուի դարձնել նոր Նաւարոնի գարկերակ Պոլսոյ արեւմտեան մասին մէջ, որ Սեւ եւ Մարմարա ծովերը զիրար պիտի կապէ: 2019-ի յետկտեմբերին Թուրքիոյ նախագահը յայտարարած էր, որ ջրանցքով ծովային երթեւեկը պիտի չենթարկուի նեղուցներու կարգավիճակին մասին Մոնթրոյի ուխտին:

1936 թուականի Մոնթրոյի ուխտը, որ մինչեւ օրս կը գործէ, Խորհրդային Միութեան, Թուրքիոյ, Բրիտանիոյ, Ֆրանսայի, Պուկարիոյ, Ռումանիոյ, Յունաստանի, Եւկոսպուլիոյ, Աւստրա-



լիոյ եւ Ճափոնի մասնակցութեամբ Չուիցերիոյ Մոնթրո քաղաքին մէջ տեղի ունեցած խորհրդաժողովին հիմամբ ստորագրուած ուխտն է, որ կ'ենթադրէ, որ բոլոր սեւծովեան պետութիւններու մարտանաւերը (առեւտրական եւ այլ նաւերուն չի վերաբերիր) ազատօրէն կրնան երթեւեկել Տարտանելի եւ Պոսֆորի նեղուցներուն մէջ, պայմանով որ նախապէս այդ մասին տեղեկացնեն թրքական իշխանութիւնները: Իսկ ոչ սեւծովեան պետութիւններու մարտանաւերու համար կայ յստակ սահմանափակում՝ միայն մանր եւ ոչ մեծ տարողութեան մարտանաւերուն կ'արտօնուի մուտք գործել նեղուցներ:

ԸՍՏ «ՈՐՈՒ ՍԹԻԹ ԾԸՈՆԸԼ»-Ի

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՎԱՕԳԱՅԻՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԴՈՒՐԻՍ
ԿԸ ԲԵՐԵՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԷՆ՝ ԶԱՆՈՒՔ ՌՈՒՍԻՆ
ՈՅ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԷՄ «ՌՈՂՂԵԼՈՒ» ՀԱՄԱՐ

Միացեալ Նահանգներ կտրուկ կերպով կը կրճատեն Միջին Արեւելքի մէջ հակաօդային պաշտպանութեան համակարգերու քանակը՝ շրջանին մէջ զինուորական ներկայութեան վերագնահատելով ան ծիրին մէջ, որովհետեւ զինեալ ուժերու ուղարկութիւնը կը կեդրոնացնեն Ռուսիոյ եւ Չինաստանի մարտահրաւերներուն վրայ: Այս մասին կը հաղորդէ ամերիկեան «Ռուլ Սթրիթ Ժընըլը» օրաթերթը՝ վկայակոչելով ամերիկեան վարչակազմի իրագէլ աղբիւրներու խօսքերը:

Աղբիւրները կը նշեն, որ սպառազինութեան ջլայտարարուած կրճատումները սկսած են 2 յունիսին պաշտպանութեան նախարար Լոյոտ Օսթինի եւ Մեւտական Արաբիոյ գահաժառանգ Մուհամետ պըն Սալմանի հեռաձայնային հաղորդակցութենէն ետք: Սպառազինութեան մեծ մասը դուրս կը բերւի Մեւտական Արաբիայէն:

Պաշտպանական աղբիւրներու համաձայն, Փենսիլվոնը ետ կը բերէ «Փաթրիոթ» հակահրթիռային 8 մարտկոց Իրաքէն, Եւրոպէն, Յորդանանէն եւ Մեւտական Արաբիայէն: Աղբիւրները կը նշեն, որ Միացեալ Նահանգներ Մեւտական Արաբիայէն նաեւ ետ կը բերեն ԹՀԱՍՆ համարմթնոլորտային հետախուզման համակարգը եւ կը կրճատեն շրջանին մէջ հալածիչներու քանակը:

«Այն, ինչ կը տեսնեք, ներուժներու վերաբաշխում է՝ ռազմավարական առաջնահերթութիւններուն համահունչ: Մենք տակաւին ուժեր ունինք Իրաքի եւ Սուրիոյ մէջ, այդ ուժերը չեն հեռանալ: Մենք տակաւին Արաբական ծոցի մեր գործընկեր երկիրներուն մէջ ունինք մեր յեմակէտները, անոնք չեն փակուիր, տակաւին կայ զգալի ներկայութիւն», ըսած է պաշտպանութեան նախարարութեան բարձրաստի-



ճան պաշտօնատարը եւ աւելցուցած է՝ այնտեղ տեղակայուած սարքաւորումներուն միայն մէկ մասը կը վերադարձուի շրջանէն:

«Ռուլ Սթրիթ Ժընըլը»-ի աղբիւրներուն համաձայն, սարքաւորումներու դուրսբերման պատճառը կապուած է նաեւ շրջանին մէջ Միացեալ Նահանգներու ներկայութեան աւելի աւանդական մակարդակին վերադարձի հետ՝ այն բանէն ետք, երբ նախորդ վարչակազմը սարքաւորումներ կ'ուղարկէր Միջին Արեւելք՝ Իրանի վրայ ճշշում գործադրելու համար: Պաշտօնատարները կը կարծեն, որ ամերիկեան զինամթերքը չէ խանգարած Իրանին ապակայունացնող գործողութիւններ կատարել:

Մեւտական Արաբիան նոյնպէս կատարելագործած է իր պաշտպանական կարողութիւնները եւ ինքնուրոյն «որսացած» հրթիռային գրոհներու մեծ մասը: Բացի ատկէ, ամերիկեան հակահրթիռային պաշտպանութեան համակարգերը պահպանման ու նորոգման կարիք ունին:

«ՇՈՒՇԻՒ ՄԷՋ ԱԶԻՊԷՅՃԱՆԻ
ԴՐՈՇԻՆ ՀԱՒԱՍԱՐ
ՊԻՏԻ ԾԱԾԱՆԻ ՆԱԵԻ
ԹՈՒՐԲԻՈՅ ԴՐՈՇԸ»

Կ'ԸՍԵ ՉԱԽՈՒՇՈՂՈՒ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Չաւուշօղլու Անթալիոյ մէջ դիւանագիտական խորհրդաժողովի փակման նիստի ընթացքին, պատասխանելով լրագրողներու հարցումներուն ըսած է, որ նախապատրաստական աշխատանքներէն ետք Շուշիի մէջ պիտի բացուի ընդհանուր հիւպատոսութիւն, եւ որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը իր աշխատակիցները կարելի եղածին չափ շուտ պիտի ուղարկէ այնտեղ: Այս մասին կը հաղորդեն թրքական լրատուամիջոցները:

«Շուշիի մէջ Ազրպէյճանի դրօշին հաւասար պիտի ծածանի նաեւ Թուրքիոյ դրօշը», ըսած է Չաւուշօղլու՝ ընդգծելով, որ ընդհանուր հիւպատոսութեան բացումը առանձնապատուկ նշանակութիւն ունի:

Խօսելով Թուրքիոյ եւ Ազրպէյճանի ղեկավարներուն կողմէ ստորագրուած Շուշիի հռչակագիրին մասին՝ Չաւուշօղլու այս փաստաթուղթը կոչած է ապացոյց այն բանի, որ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի միջեւ միութիւնը պիտի ըլլայ բարձրագոյն մակարդակի վրայ:

ԵՄԷՆԵԱՆ ԶԻՆԵԱԼ ՌԻԺԵՐԸ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԼՐՏԵՍԱԿԱՆ
ԱՆՕԳԱԶՈՒ ԹՈՉՈՂ ՍԱՐՔԻ ՄԸ
ՎԱՐ ԱՌՆՈՒԻԼԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՅԻՆ

Եմենեան զինեալ ուժերու բանքեր Եահիա Սարիի յայտարարեց, որ Եմենեան հակաօդային պաշտպանութեան ուժերը ցամաք-օդ հրթիռով վար առած են ամերիկեան «Սքան Իկլը» տիպի լուսնասկան անօդաչու թռչող սարք մը, որ «թշնամական գործողութիւններ կը կատարէր» Մաարեպ Նահանգի Մաշժահ շրջանին վերեւ:



Ան նշեց, որ ամերիկեան անօդաչու թռչող սարքի վար առնուիլը տեսագրուած է եւ անոր բեկորները լուսանկարուած են:

«Չինեալ ուժերը կը վստահեցնեն, որ որեւէ ջանք պիտի չխնայեն Եմենեան օդային տարածքը պաշտպանելու եւ բոլոր թշնամական գործողութիւններուն դէմ դնելու իրենց պարտաւորութիւնները կատարելու առումով», աւելցուց ան:

Նշենք, որ Եմենեան բանակի բանքերը շաբաթ օր յայտարարած էր ականուած անօդաչու թռչող սարքով Մեւտական Արաբիոյ հարաւարեւմուտքը գտնուող օդուժի «Մալեք Խալեթ» ռազմակայանին դէմ յարձակումի մը գործադրութիւնը:

Կ'ՈՒԶՈՒԻ

Հ ա ս տ ա տ ու լ -
թիւն մը կարիք ունի վարպետ կադապարագործներու (թորոնճի):
Դիմել՝ հեռ. 03-244967:

US&IL AFHIL

HEALTH CLUBS

BACK TO GYM

Antelias - Aghpalian Center, 04 712342
Bourj Hammoud - Arin Center, 01 255023

www.afhil.com